



ԱՐՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ





13 APR 2011





891.39.092 Կրոնցի

2-39

ԱՌԵՐԵՆ ԶԱՐՅԱՆ

ԱՎ

ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱԼՈՒ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԹԵՐԵԿԱՆ

1939

Համառոտագրություն Լենինականում
1939 թ. մ. յիսի 21-ին կ. բդ.ցած զւկուցման



1872
40

Рубен Зарьян
ЖИЗНЬ АБОВЯНА
Խ. Արմ. ССР, Еревան

Գրողների ճակատագիրը տարբեր և լինում.
Կան գրողներ, վորոնց մասին ժամանակակից-
ները խոսում են վոգեվորված, հափշտակված,
բայց հենց վոր անցնում և մի սերունդ, հե-
տքհետեւ մոռացվում են. Բայց կան և այն-
պիսի գրողներ, վորոնց չի հաջողվում կենդա-
նության որով տեսնել, վայ'լի իրենց վառ-
տակի պառուզը, փառքը: Մեծ մասամբ նրանց
դեմ կովում են, հետապնդում, հալածում,
նույնիսկ թունավորում: Բայց հենց վոր մեռ-
նում են, փառքը ստվեր դառած հետևում է
նրանց: Այդպիսի գրողներին մատների վրա
կարելի յե հաշվել: Նրանք յնպակի յեն, շատ
քիչ: Այդ գրողներն են ստեղծում գրականու-
թյան պատմությունը: Նրանց անունով և
բացվում գրականության պատմության նոր
գլուխը: Այդ գրողները միշտ սկիզբն են ու-
րիշի շարունակության, այսինքն նրանք են
ուղղություն ստեղծում, վոճ կերտում, ունե-

նում աշակերտներ, հետևողներ: Ժամանակի լուսավոր գաղափարներն արտահայտելը՝ նրանց որբազան գործն է: Հումանիզմը՝ նրանց եյությունը: Անմահություն—ահա այն պարգելը, վոր տալիս ե նրանց ժամանակը:

Այդիսիներից ե և Խաչատուր Աբովյանը, հայ նոր գրականության անմահ նախագլուխը: Նա մի ովկիան է, վորի մէջ թափկել է հազար ու մի զետ: Պատմականորեն նրան վիճակվեց հարթելու այն դժվարին առապարը, վորով յերեսնական, քառասնական թ.թ. հայ հառարակական մտքի լավագույնն ու լուսավորն ուսի՞ն՝ նա քայլեց դեպի մեր գրական-մտավորական կյանքի հախուսն վերածնությունը: Աբովյանը լուսավորական շարժման առաջին ջահակիրներից է: Ինչպես ամենուրեք, այնպես ել մեզ մոտ, լուսավորիչը մի կենդանի հանրագիտարան է յեղել. մանկավարժ, ազգագրագետ, լիդլարան, պատմաբան, թարգմանիչ, Փոլկորիստ, տուրիստ և վերջապես, գրող՝ բառիս խորագույն իմաստով: Նա հիշեցնում է իտալական վերածնության գործիչներին:

Պողյանն իրավացի յեր. Աբովյանը ժամանակից շուտ եր ծնվել: Յեզ իրավ. հեռավոր տարիների մշուշից նա մեզ ներկայանում ե վորպես մի առաօպելական անձնավորություն, վոր իր քնքուշ որտի ամեն մի

կարկը գոհ ըերեց ժողովրդին, միայնակ հանդուգն պատերազմի յելավ խավարի և պատերազմի, յեկեղեցու ու կղերի դեմք Այս, Արքովյանը միայնակ եր: Այդնրա վողբերդությունն եր: Նա մի լուսո ճառագայթ եր Շիավարի թագավորության» մեջ: Նա իր լուսով մի պահ բոցավառեց մոռայլ, անփարատ խավարը, և սեփական բոցից ել վողջակեղ յեղավ:

Դասնանք դեպի պատմությունը, դեպի այն ժամանակները, յերբ ապրել ու կործել ե Աբովյանը: Թերթենք նրա կյանքի տարեգրությունն եջ առ եջ:

Յերբ և ծնվել Խաչատուր Աբովյանը, ըստույգ հայտնի չի: Ինքը, Աբովյանն ել չի իմացի իր ծննդյան ճիշտ թիվը: Հիշողությամբ նա թողել է մի քանի տարբեր թվականներ: Հավանական թիվը պետք է համարել 1809-ը: Ծնվել է Քանաքեռում, հարուստ, նշանավոր և ամեն կողմից հարգված հարկի տակ: Աբովյանի հեռավոր նախնիները յեղել են իշխաններ: Նեղվելով լեռնցիների առաջատակություններից՝ Աբովյանի ապուպապը՝ Ապովը թողնում է Լազիպտանը, գալիք և Հայաստան:

Ահա այս Ապովից ել սերում և Աբովյանների տոհմը:

Ապովի վորդին կոչվում էր Վիրապ, նրա վորդին՝ գարձյալ Ապով: Վերջին Ապովը յերկու զավակ եռնենում, մեկը Ավետիք, մյուսը՝ Հարություն: Վերջինն Աբովյանի հայրն է: Ապովի մահից շատ տարիներ հետո ել նրա անունը պատկառանքով եյին հիշում նրա ժամանակակիցները, «Հարիր տարի կըլի, վոր

լուսահոգի Ապովը մեռել ա, ելի նրա վողործին հա կա, հա կա»: Աբովյանն ասում է, վոր իր մանկության որերին թուրք ու հայ նրա գերեզմանովն եյին որթում ուտում: Ապովի նահապետական առաքինությունները՝ հյուրասիրությունն ու առաստաձեռնությունը հայտնի եյին: Ապովը իր ձեռովը Յերևանից Թիֆլիզ տանող ճանապարհի վրա մի մեծ այգի յեր գցել, վոր «անց կենողը գա, նրա բարությունը վայելի»: Այգու բոլոր պտուղները ուտարներինն ու ճանապարհորդներինն եր: Միշտ նրա դուռը բաց եր, վոր ով վորչափ ուզում ե՛ռտի, տանի: Հազարավոր մարդ եր մտնում ու դուրս գալիս: Բացի այն՝ վոր տանում եյին, այլև քթոցների մեջ լցնում եյին ու դնում ճանապարհի վրա, վորպեսզի մի փորես ոտարական, վոր գուցե բոլորովին տեղեկություն չունի այգուց և գալիս անցնում ե, ուտի ու վերցնի այնտեղից, վորքան կարող ե: Ինչպես վոր այդին, այնպես ել տունն եր: Շատ քիչ կպատահեր, վոր այդ ճանապարհով մեկն անցներ ու չմտներ նրա տունը, Ապովի համբավը շատ հեռուներն եր տարածվել: Իսկ «Ճամփի վրի մեծ իքու անունը—Հնդոստան ա հասել»,—առում ե Աբովյանը:

Աբովյանի հայրը, Հարությունն այլևս իր նախնիների դիրքն ու կարողությունը չու-

ներ: Բայց նա ել պակաս անվանի մարդ չեր: Նրա տունը Քանաքեռի պատվավոր հարկերից մեխն եր:

Նրան շատ լավ ճանաչում եցին կաթողիկոսը, Եջմիածնի միաբանները, Յերևանի ռարդարը, պարսիկ մելիքները, հայ վաճառականները, Նա սիրելի հյուր եր ինչպես Եջմիածնում, այնպիս ել Յերևանում, քաղաքի անվանի մարդկանց ու մեծամեծների տանը:

Հոր հետ մի առանձին սիրով ե կտպված յեղել վորդին, Խաչատուրը: Զիշելով զրեթե վոչ մի տեղ մորը, Աբովյանն իր հորը նվիրել ե բանաստեղծություններ, նրան դուրս ե բերել իր գրվածքների մեջ: Դա մի հաղթանակամ գյուղացի յեր, անվախ սրտի տեր, զարմանալի քաջ, խստաբարո, բայց բարի, ընտանիքը սիրող: Աշխատանքից հետո, յերեկոները, ձմրան գիշերներին՝ տանը, ոջախի շուրջը, ամառային որերին՝ դուրսը, աստեղազարդ յերկնքի տակ, իր շուրջը հավաքած վողջ գերդաստանը, Հարությունը խոսում եր, զրուցում աշխարհի բարու և չարի մասին: Պարզամիտ նահապեական գյուղացին աշխատում եր իր յերեխաներին մարդասիրական գաղափարներ ներշնչել: Նա համոզում եր հարգել մեծերին, պահել ընտանիքի պատիքը, կանգնել պաշտպան թույլին, ոգնության հառնել ընկածին: Հոր զրաւցներն ու

խրատներն Աբովյանի վրա մեծ տպավորություն ելին թողնում:

Պակաս ազդեցություն չեն ունեցել Աբովյանի վրա նահապետական գյուղի լի ու առատ կյանքը, հայկական հյուրասիրությունը, ժողովրդական տոները—բարեկենդանն իր խընդություններով, գյուղական ջահելների խաղը, պարը, յերգը, ջիրիդը:

Աբովյանի մանկական հուշերի վոսկեցը՝ թայի մեջ առանձին տեղ ունի Քանաքեռի բնությունը: Մանուկ հասակից բնությանը սիրահարված եր նա: Իր նամակների ու բանաստեղծությունների մեջ անդադար հիշում ե Քանաքեռը, տեղը բարձր, ջուրը քաղցր, ողը գեղեցիկ, չորս կողմը բաղերով լի: Շատ հաճախ չարաճճի ու աշխույժ մանուկը, թողած խաղը, ընկերներին, բարձրանում եր կտուրը, նստում ժամերով, սքանչանում ըընությամբ: Նա հմայված դիտում եր անձրսից հետո յերկնքի անհուն կապույտի վրա յերիգվող չքնաղ ծիածանը, Արարատյան գեղատեսիլ գաշտավայրը, նրա վրա վեհությամբ բազմած փոքր ու մեծ Արարատները: Զգայուն և շուտ տպավորվող մանկան հոգու վրա բնությունը դրեց իր անջնջելի կնիքը: Բնության սերն ու պաշտամունքը շնչում են նրա յուրաքանչյուր տողի մեջ:

Անկարելի յե, վոր այդպիսի ուշիմ, խելոք

և զգայուն մանկան հոգու վրա հառարակական շրջապատճենի իր աղդեցությունը չունենար: Մի գերմանացի ճանապարհորդ իր ուղեգրությունների մեջ Աբովյանի բերանից պատմում ե այն վայրագ բռնությունները, վոր խանական Պարսկաստանի տիրապետության որով գոյություն ունելիքն Քանաքեռում և ընդհանրապես Հայաստանում: Ամեն ամառ հարկահավաքը գալիս եր դյուղ և մնում յերեքից չորս ամիս: Այդ ամիսներին նա յեր գյուղի իշխանափորը: Նրա ցանկությունը կարգադրություն եր, խոռքը՝ անվերապահ հրաման: Բոլորը հլու-հնազանդ յենթարկվում եյին նըրան: Նրա ծառան շըջում եր տնից-տուն և յեթե գյուղացիները գանդաղում եյին նրա պահանջը կատարելու, խուժում եր խրճիթ, ճիպոտահար անում բոլորին, տան ունեցվածքը ջարդում, յերբեմն ել այրում:

Թաղիադյանն ել տվել ե այդ բռնությունների նկարագիրը: Յերբ գյուղիրում բերք չեր լինում,—ասում ե նա,—Յերեանի բդեխը, Հյուսեյին խանը, վնասը վերագրում եր ժողովրդին: Նա գործ եր դնում նրանց վրա բռնություն և անպատմելի խժդֆություն, խլում, հափշտակում եր ինչ վոր տներում գտնում եր, կահ-կարասի, և յերբ այդ ել չեր լինում, խլում եր նրանց տունն ու տեղը, վորդիներին: «Աղջիկն: առես՝ քաշում ելին,

տղեն առես՝ տանում, շատ անգամ թուրքաց-նում, հավատից հանում, շատ անգամ ել գըշտիւս կտրում, երում, նահատակուցն, պատմում ե Աբովյանը:

Ահա այս բոլորի վկան ե յեղել Աբովյանը: Կարող եր այս բոլորը չխոռվել նրա մանկական հողին: Իհարկե, վհչ Այդ բոլոր կեղեքութիւնները ծանր, ձնշող տպավորություն են թողել նրա վրա: Այդ բոլորն Աբովյանը պատկերագրել ե «Վերք Հայաստանի» վապի մեջ: Պարզ ե, վոր տաճնամյա մանուկն այն ժամանակ շատ լուրջ մտքերի հանգել չեր կարող: Բայց այդ չի նշանակում, վոր զգայուն յերեխան կարող եր անտարբեր մալ դեպի իր շրջապատը: Նա մանկուց թշնամությամբ եր լցված դեպի հարկահավաքները, մարդիկ՝ վորոնք տեր եյին կանգնում ուրիշի վաստակին: Նրա մշուշապատ մտածումները կարող եյին զեռ այն ժամանակ վճիտանալ: Զե՞ վոր գյուղացիները հավաքվում եյին, ասում, խոսում, դժգոհում անիրավ կարգերից, մարդավայել կյանք յերազում: Աչքաբաց մանուկը, անշուշտ լսել ե գյուղացիների խոռքն ու զրույցը:

* *

Հարությունը մի առանձին մտահոգություն ուներ վորդու կրթության և ապագայի վրա: Հենց վոր Աբովյանը բոլորեց իր տաօք տարին, հայրը նրան տարավ Եջմիածին:

Աբովյանն Եջմիածնում մնաց մոտ հինգ
տարի: Թե ինչ կյանք ե ունեցել նա այդ
տարիներին, շատ քիչ ե հայտնի:

Աբովյանը գյուղում, ընության ծոցում ծըն-
ված ու մեծացած մանուկ եր, վոր ընկավ Եջ-
միածնին: Նա իր հետ տարալ գեղջկական հո-
գու պարզություն և մաքրություն: Խաղը,
խնդությունը, անհոգ զվարճանքը, մեծերի
գուրգուրանքը նրա սովորական առորյան եր
գյուղում: Նոր շրջապատը, Եջմիածնի մթին
խցերի վանական կյանքը, գյուղականի հա-
կապատկերն եր: Գուրգուրանքի փոխարեն՝
դաժանություն, խաղի տեղ՝ ծեծ ու պատիժ,
ազատության փոխարեն՝ ստրկական հնաղան-
դություն: Ինչպես մյուս մոնթերը, այնպես
ել Աբովյանը, կանուխ առավոտով, հավախո-
սից անմիջապես հետո, պետք ե արթուն լի-
ներ: Ով դժվարանար ժամանակին վեր կե-
նալ, բարակ ճիպոտի հարվածներն իջնում
եյին նրա վոտներին: Առավոտյան ժամեր-
գությունը տևում էր անտանելի յերկար, յե-
րեք-չորս ժամ: Մատաղահառ յերեխաները
ծունկի յեկած մրմնջում եյին աստվածախոս
աղոթքներ: Իսկ հետո ել մթին ու անհրա-
պույր խցերից մեկում, խմբված վորեն ծե-
րունի վարդապետի շուրջ, մանուկները սո-
վորում եյին սաղմոռ և շարական:

Աբովյանը չդիմացավ վանքի դաժանու-

թյուններին: Մի քանի անգամ փախստի փոր-
ձեր արեց: Բայց անհաջող: Փախչողների հետ
շատ խիստ եյին վարդում: Փախչողներին
պատժում եյին ամենագաժան ձեռվ, այսինքն՝
կախում եյին մի բարձր տեղից և անողորմ
հարվածներ թափում նրա վոտքերի յեղունգ-
ներին, մինչև աննկարագրելի ցավերն ուշա-
թափ կանելին «մեղավոր» յերեխային:

Գերմանացի բանաստեղծ Բողենշտեռը, վոր
մոտիկից ծանոթ եր Աբովյանին, իր ուղե-
գրությունների մեջ հիշում է, վոր Աբովյանն
Եջմիածնի մասին ասել ե իրեն թե՝ կարծեք
իր գլխին սառը ջուր են մաղում, յերբ ինքը
վոտք և գնում հին պարիսպներից ներս, այն-
քան անտանելի յեն այն տպավորություննե-
րը, վոր ինքն ստացել ե իր պատանեկության
հասակում և վորոնք յերբեք այլև չեն չքա-
նում իր հիշողությունից:

Ուրեմն, վորքն ծանր ե յեղել պատանու
համար. այդ հինգ տարվա կյանքը: Գրեթե
յերկու տասնամյակ հետո ել, վանք վոտք
դնելիս, մոայլ հիշողությունները ծանր մըղ-
ձավանջի նման իջնում եյին նրա վրա:

Բողենշտերի ասելով Աբովյանը մեծացել է
լացի, աղոթքի և պահքի մեջ, մի վայրենի,
ամեն ազնիվ բանի համար բթացած, անբնա-
կան հեշտությանց մեջ ապականված մի շրջա-
պատում, ավելի ոգուտ չունենալով, քան այն,

վոր նա մի փոքր զբարար սովորեց Եջմիածնում:

Վանքում Աբովյանի միակ մխիթարությունն Անսոն յեպիսկոպոսն եր: Աբովյանի խնամքը նրան եր հանձնված: Աբովյանն այնքան եր սիրում իր խնամակալին, վոր երբեմն ել նրա ազգանունով եր ստորագրում Խաչատուր Անտոնյան: Աբովյանի ձեռագրերի մեջ պահպանվել ե Անտոն յեպիսկոպոսին նվիրված մի չափածո գովեստ*, Պատանի բանաստեղծն իր թոթով էզվով շնորհակալ ե լինում ուսուցչին, վոր աշակերտին ներշընչե ե սեր դեպի գերքը: Նրա ձեռքի տակ սովորելով գրել-կարդալ Աբովյանը տասնհինգամյա հասակո մ ընթերցում ե հայրենասիրական գրքեր: Նա ծանոթանում ե Դուկաս Վանանդեցու, Սիմեոն կաթողիկոսի, Մխիթար Աբբայի կյանքին: Կարդացած գրքերը վառում են պատանու մեջ հայրենիքի սերը և կոչում նրան ծառայելու ճնշված ժողովրդին, յերկրին: «Փափագէի և հս իմ Ովանն կարողութեամբ պիտանի լինել ազգին իմում սիրելոյ», — զրում ե Աբովյանն այդ գրքերը կարդալուց հետո: Այդ գրքերն ոգնեցին նրան ճանաչելու իր յերկրի անցյալը, խորամուխ

* Անտոնի մահից հետո, ի ճշան յերախտագիտության, Աբովյանը գերեզմանաքար է գցել տալիս նրա վերմին:

լինելու հարց պատմության մեջ: Նա իմացավ, վոր հայ ժողովուրդն իր սկիզբն առնում է հյուսավուրց ժամանակներէց, վոր յեղել ե ժամանակ, յերբ հայերը վոտք են գցել աշխարհի հզոր պետությունների հետ: Կարող եր նա չնկատել, վոր նույն այդ ժողովուրդն այժմ տառապագին հեծծում ե ուսար լծի տակ, վոր գերի յե, ստրուկ իր սեփական հողի վրա: Ի հարկե, վոչ: Գյուղում տեսածն ու լսածը՝ կարդացած գրքերի ազգեցության տակ՝ այժմ կարող ելին շատ վորոշ խորհրդածությունների առարկա գառնալ: Անկարելի յե, վոր պատանի հայրենասերն արգեն չմտմտար այն ուղիների մասին, վոր հայ ժողովրդին կարող ելին աղատություն բերել: Վորհնք ելին այդ ուղիները, Աբ վյանը չգիտեր: Վհչ վանական միջավայրը, վհչ ել կարդացած գրքերն ունակ չելին ցույց տալու նրա վորոնածը: Յեվ հայրենասիրությամբ տոգորված տասնհինգամյա պատանու վառվուն միտքն ու հոգին՝ հայրենի յերկիրն ապատ ու յերշանիկ տեսնելու անհուն փափագով՝ դեռ այն ժամանակ իրենց առաջին ճամբանքը կատարեցին դեպի յերադանքների յերանելի աշխարհը:

*

Հինգ տարի Եջմիածնում մնալուց հետո, Աբովյանն անցնում ե Հաղպատ, այնտեղից



ել Թիֆլիս: Նա գնում եր ուսման մեջ կատարելագործվելու: Թիֆլիսն իր ուրույն հյանքով մի նոր աշխարհ եր Աբովյանի համար: Գավառացի պատանին ընկել եր քիչ թե շատ մեծ, շարժուն քաղաք: Կյանքը Թիֆլիսում մի առանձին ու յուրատեսակ ժպիտ ուներ: Այդ չեր կարող վրիպել Աբովյանի աչքից: Զե վոր քիչ առաջ եր միայն նա աղատվել վանքի մոայլ խցերից: Սրտաբաց, զվարթ քաղաքը, վանքի մոայլ, միալար կյանքի հակապատկերն եր: Հենց վոր իրիկնապահը վրայիր հասնում, փողոցները լցվում եյին յերգի և խնդության ձայներով: Զունա, նազարա, դհու, մի խոռոշով՝ պարից, յերգից, ծափ ու ծիծաղից թնդում եր քաղաքը: Մի առանձին սքանչելիք եր, յերբ լուսնակ գիշերով քաղաքի փողոցներում սկսում եր ծորել Սայաթ-Նովայի յերգերի թախիծը: Յերգիչներն ու նվազողներն անցնում եյին փողոցից-փողոց, թաղից-թաղ: Ժողովուրդը՝ հավաքված դարպանների մոտ, պատշգամբների ու կտուրների վրա՝ ուրախանում եր: Ճիշտ և նկատելքանատեղը, թէ Թիֆլիս առաջին անգամ վոտք գնողը այն տպավորությունն եր ստանում, վոր ինքն ընկել և մի մեծ և ուրախ հարսանքատուն, ուր հրավիրված եյին Կովկասի բոլոր աղքերն ու ցեղերը՝ քեփ անելու: Թիֆլիսը քիչ թե շատ լուրջ ուսումնական

հաստատություններ չունել այն ժամանակ: Մի պատմաբանի ասելով՝ ամբողջ քաղաքում վորպես հայագետ հոչակված եր ժամկոչ Յեղագար Գալստյանը: Նա մի դուքանում, գետնի վրա պարապում եր յերեխաների հետ, նրանց պահելով ֆալախկայի մշտական ահ ու սարսափի տակ: Ահա այդ ժամանակներում Շուշուց Թիֆլիս և գալիս Պողոս վարդապետ Ղարաբաղցին: Նա նշանավոր հայկաբանի համբավ եր վայելում: Վերջնիս յեռանդուն գործունելության ըլջանում ժամկոչ Յեղիսարին ստվերի մեջ և մնում: Աբովյանը, Ստ. Նազարյանը և մի խումբ այլ պատանիներ Պողոս վարդապետի ձեռքի տակ մի տարուչափ ուսում են ստանում: Նա իր աշակերտների հետ պարապում եր Տափիթաղի վանքում, իր խցում: Այսեղ ևս ֆալախկայի թագվորությունն եր:

Հետաքրքրաներ ու վառվոուն պատանիները «վարժապետական գավազանի» ահի տակ, որ ու գիշեր գլուխ եյին ջարդում Զամշյանի քերականության, Աղոնց Ստեփանոսի ճարտառանության և Թեսավրոսի վրա: «Պիտո յեանել, վոր այդ վարժապետը, — գրում ե Նազարյանը Պողոս վարդապետի մասին, — ավելի ծեծ, քան թե ուսում ե տվել յուր աշակերտներին»:

1824-ին, Ներսես արքեպիսկոպոսի ջանքե-

ըով, Թիֆլիսում բացվեց մի հոգևոր կպրոց։
 Դպրոցը կոչվեց հիմնադրի՝ Ներսեսի անունով։
 Նոր բացված զպրոցի տեսուշ կարգվեց Մոսկ-
 վայից հրավիրված Հարություն Ալամդարյա-
 նը։ Ներսիսյան դպրոցի բացումը մի կատար-
 յալ հեղաշրջում եր հայ յերեխաների կրթու-
 թյան գործում։ Ասում են, վոր դասատվու-
 թյունը յեղել է վայրիվերո, բացի Ալամդա-
 րյանից մի ուրիշ կարգին ուսուցիչ չի յեղել։
 Այդ բոլորով հանգերձ, դա հայ իրականու-
 թյան մեջ առաջին, բառի ճշգրիտ մտքով՝
 աշխարհիկ դպրոցն եր։ Բացի ոռւսերեն, ֆրան-
 սերեն և պարսկերեն լեզուներից, հայ պատա-
 նին Ներսիսյան դպրոցում ծանոթանում եր
 ընդհանուր և հայոց պատմությանը, քրիստո-
 նեական վարդապետությանը, անցնում թվա-
 րանություն, աշխարհագրություն, նկարչու-
 թյուն, վարժվում ճարտարանության և տրա-
 մաբանության մեջ։ Պողոս վարդապետի վար-
 ժատունը Ներսիսյանի, մի տեսակ, նախա-
 պատրաստականն եր։ Յերբ բացվեց Ներսի-
 սյանը, Պողոս վարդապետն իր աշակերտներով
 տեղափոխվեց նոր կրթարանը։ Տեղափոխվեց
 նաև Աբովյանը։ Աբովյանի ծանոթությունն
 Ալամդարյանի հետ վճռական նշանակություն
 ունեցավ։

Աբովյանի եջմիածնական մատուցմների մը-
 շուշը Թիֆլիսում սկսեց ցրվել։ Եջմիածնում



Հարություն Ալամդարյան

պատանու մեջ արթնացավ սեր գեղի գիրքն
ու ընթերցանությունը: Կարդացած գրքերը
նրա մեջ վառեցին հայրենասիրության բարձր
զգացումը: Այդ բոլորն իրենց գաղափարական
հունը գտան միայն Թիֆլիսում: Այդ հար-
ցում շատ մեծ եր Ալամդարյանի դերը: Մեծ,
կարելի յե ասել՝ անջնջելի ազդեցություն և
թողել նա իր աշակերտների մտքի և հոգու
վրա: Տարիներ հետո Արովյանն Ալամդարյա-
նի սպանության լուրն առնելով, իր հիշա-
տակարանի մեջ գրեց, թե նրա մահով անթիվ
հայ պատանիներ ու յերիտասարդներ կորցրին
իրենց ապագան:

Ալամդարյանը սուսական որիենտացիայի
մարդ եր: Ռուսական պետականության մեջ
եր նա տեսնում Հայաստանի փրկությունը:
Հայաստանի ապագա բախտը, կուլտուրական
վերածնությունը նա կապում եր Յերեանը
Ռուսաստանի կողմից նվաճելու հետ: Կովկա-
սի մեծ մասն արդեն նվաճված եր: Իսկ Հա-
յաստանը շարունակում եր մնալ Պարսկաս-
տանի ձեռին: Այդ հարցերի մասին նա, ան-
շոշտ, խոսում, զրուցում եր իր աշակերտների
հետ: Շատ բան այժմ հայտնի չե այն կապի
մասին, վոր այդ տարիներին ունեցել են աշա-
կերտը և ուսուցիչը, Արովյանն ու Ալամդար-
յանը: Լինելով ամենահասակավորը և լրջա-
խոհն աշակերտների մեջ՝ անկարելի յե, վոր

Արովյանը դասերից կուրս, դպրոցական պաշ-
տոնական ժամերից հետո զրույցներ ունեցած
շինի Ալամդարյանի հետ: Ուսուցչի զրույց-
ներն առատ սնունդ տալով Արովյանի ծով
յերեակայությանը՝ պետք ե վոր դեռ այն
ժամանակներից պատանուն ստիպելին լրջո-
րեն խորհել իր յերկրի բախտի վրա: Զե՞ վոր
ինքը մանկուց վկայեր յեղել, տեսել եր հայ-
րենիքի տառապանքը: Վորդեգրվելով իր ու-
սուցչի քաղաքական ծրագրերին՝ Արովյանը
գտած եր համարում իր վորոնմունքը: Նա
ել, Ալամդարյանի նման, Հայաստանի ազա-
տագրության միակ խարիսխը ոռւսական պե-
տականությունն է համարում:

* * *

Արովյանը Ներսիյան դպրոցի առաջին շըր-
ջանավարտներից յեղավ: Ներսիյան դպրոցն
Արովյանի մեջ վառել եր մի անսահման սեր
գեղի գիտությունը, բորբոքել նրա յետանդն
ու ձգառումը գեղի լուսավորությունը: Ավար-
տական վկայական ստանալով՝ Արովյանն ան-
ցավ Հաղպատ, ըստ յերևութին, Յեփեմ կա-
թողիկոսից Վենետիկ ուսման գնալու թույլ-
տվություն ստանալու համար: Գնալ Վենե-
տիկ, թաղվել գրքերի մեջ, տիվ ու գիշեր
կքվել ձեռագրերի վրա, — այս եր նրա յերազը:
Բայց այդ միայն յերազանք եր: Անակնկ և

պատերազմը պարսիկների և ռուսների միջև
խանգարեց նրան:

Աբովյանը վկա յեղավ պատերազմական ա-
ղետին: Հայկական գյուղերը մատնվում եյին
հրի ու սրի: Ժողովուրդն սկսում է դադթիւ,
հաստատվել ոռւսի հողի վրա: Հայ գյուղացին
վողբաձայն լացով հրաժաշտ և տալիս իր հո-
ղին, ջրին, ժողովուրդը սար ու ձոր և ցվել,
իրար վրա թափվել: «Լացի, սքի ձենը յեր-
կինքն եր հասել, լսողի, տեսնողի սիրալ ե-
րում, փոթոթում», — պատմում ե Աբովյանը
«Վերքի» մեջ:

Ինելով պատերազմի մեջ, միշտ գերի ընկ-
նելու վտանգի տակ, տեսնելով հայ գյուղա-
ցու անպատմելի զրկանքները, Աբովյանը մի
անգամ ընդմիշտ համոզվեց Ալամդարյանի
ներշնչած քաղաքական ձգտումների ճշմար-
տության մեջ: Նա թեև պատանի, բայց ար-
դեն ռուսական որիենտացիայի համոզված
ներկայացուցիչներից եր:

Պատերազմը տակավին չավարտված՝ Աբո-
վյանը մեկնում է Եջմիածին: Յերևանում նա
գրում է մի վուանավոր, վորով փորձում է
տալ իր հայրենիքի աղատագոռության ծրա-
գիրը: Այդ բանաստեղծությամբ նա հանգես
ե գալիս երբե կաղմակերպված քաղաքացի
չետաքրքրական և մի հանգամանք: Աբո-
վյանը դեռ թիֆլիս չմեկնած, 1824-ին, դար-

ձալ Յերևանում, գըեց իր առաջին վոտանա-
վորներից մեկը, վորտեղ հայրենիքի տիբրա-
գին վիճակից դառնացած՝ վոգեկոչում և հայ-
րենի անցյալի անցած-գնացած փառքը: Փըր-
կության և հույսի վոչ մի շող չտեսնելով ա-
վերակ յերկրի համար, նա դառնում է զեպի
հայրենի գետերը և խնդրում, վոր իր ար-
ցունքն ել խառնեն իրենց հոսանքին: Այս
բանաստեղծությունը գրելուց հետո անցել եր
մի քանի տարի: Դեմքեր ու գեղքեր եյին
փոխվել Աբովյանի կյանքում: Պատանի հե-
ղինակը վերադարձել եր հայրենիք շատ վո-
րոշ քաղաքական ձգտումներով ու համոզում-
ներով: Նոր գրվածքի մեջ բանաստեղծն այն
միտքն է հայտնում, վոր հայ ժողովուրդն իր
գալիք կյանքի բախտը, հանգիստն ու յեր-
շանկությունը կզտնի միայն ռուսական պե-
տականության հովանու տակ: Այդ ցույց ե
տալիս, վոր Աբովյանն այդ տարիներին միան-
գամայն լրջախոհ հայացք ուներ զեպի հաս-
րակական-քաղաքական կյանքը: Այդ բանաս-
տեղծությունը յեղավ Աբովյանի քաղաքա-
կան հասունության վկայագիրը:

* * *

Աբովյանն Եջմիածին հասավ այն պահին,
յերբ վողչ միաբանությունը մի անհանգիստ
տագնապի մեջ եր: Քաղաքական դեպքերը

շատ աըադ հաջորդում եյին իրար: Կաթողիկոսը չկար: Բոլորը սպասում երի մեջ եյին: Ներսես Աշտարակեցին, վոր այդ ժամանակ Վրաստանի թեմի առաջնորդն երև և Ռուսաստանի հաղթանակի համար հայերի մեջ հողպատրաստողներից մեկը; միաբանության մեջ համախոհներ ուներ և, ի հարկե, նաև հակառակորդներ: Պատանի Արովյանն իր համակրություններով հակված եր գեղի ներսեսականները: Վերջիններն եջմիածնում հող եյին պատրաստում ներսեսի համար, նրա գալըստյան հետ հույսեր և ակնկալություններ կապում:

1827-ի գարնանը ուսւաց զորքերը Յերեվան մտան: Հայոսանն անցավ Ռուսաստանին: Արովյանի և նրա համախոհների բաղձանքը կատարված եր,

1828-ին, յերբ արդեն պատերազմը վերջացել եր, յերկիրը գրեթե խաղաղել Յեփրեմ կաթողիկոսը վերադարձավ Եջմիածին, Կաթողիկոսի վերադարձից հետո, Արովյանը կարգվեց «թարգման և գրագիր նորին վեհափառության»: Այս պաշտոնը մեծ կշիռ տվեց Արովյանին, Բացի այս, նաև լավ գիտեր գրաբար, ինչպես և ուսւերեն, Զունենալով իր յերկրորդը միաբանության մեջ, վանքի համար Արովյանը դարձավ շատ կարևոր և գրեթե անփոխարինելի անձնավորություն:

Բոլորը նրան բախտավոր եյին համարում, յերանի տալիս: Բայց նա ինքն իրեն դըժբախտ եր զգում: Ի՞նչն եր դրա պատճառը: Եջմիածին վերադառնալով՝ Արովյանը բերել եր, Նազարյանի խոռքով առած, «յուր որտի մեջ մի վառ ուսումնառության կրակ»: Հերավի, Արովյանին այրում եր ուսում ստանալու, կըթված մարդ զառնալու գաղափարը: Յերազները հանգիստ չեյին տալիս նրան: Վորոգայթների անվերջանալի շարանը, դավերն իրար դեմ, կրիմսերը, բամբառանքները, վոր վանականների մեծ մասի հոգեկան սնունդըն եյին կազմում, Արովյանին զգվեցրել եյին: Դեռ այն ժամանակ նա մի ամբողջ գըլիով բարձր եր կանգնած վանական ճահճուտից: Նա ուզում եր հեռանալ, գնալ սովորելու: Ընդառաջող չկար: Անտոն յեպիսկոպոսի ջանքերն՝ իր սանին Աստարխանի Աղաբարյան դպրոցում տեղավորելու՝ արդյունք չեյին տվել: Իսկ Անտոնի մահից հետո այդ մասին մտածող անգամ չկար: Զանում եյին գայթակղեցուցիչ խոստումներով հրաժարեցնել նրան իր բարձր ծրագրերից: Հոգմորական բարձր կոչումներ եյին խոստանում—վարդապետություն, յեպիսկոպոսություն: Այդ փառքը, սակայն, պատանուն չեր հմայում: Նա մտածում եր իր հոգեկան աշխարհի կատարելության մասին:

1828-ին Ներսես Աշտարակեցուն թեսարաքիա ուղարկեցին: Սա աքսորի նման մի բան եր: Դա մի փորձ եր հեռացնելու, կղղիացնելու մեկին, վորի ազդեցությունը միաբանության և նրա գործերի վրա շատ ավելի յեր, քան նույնիսկ կաթողիկոսինը: Ներսեսի աքսորը փշրեց նրա կուսակիցների յերազանքներն ու սպասումները:

1829-ին մի խումբ հոգևորականներ միաքեն հղանում Միսիթարյան միաբանության որինակով ընկերություն հիմնել: Նոր միաբանությունը պետք է գործեր Սևանի կղղուվրա՝ իր շուրջն համախմբելով այն ժամանակվալուսամիա հոգևորականներին: Միաբանության նպատակն եր զբաղվել հայագիտությամբ, տպարան հիմնել գրքեր հրատարակել ձեռագրեր հավաքել, դպրոց ու գրադարան բանալ, մի խոսքով՝ լուսավորություն տարածել: Նոր միաբանության անդամներից եր լինելու նաև Արովյանը: Մի վորոշ ժամանակ գաղտնի յե պահվում միաբանություն հիմնելու գաղափարը, բայց հետո, յերբ արդեն մշակված եր գործունեյության ծրագիրը, հարցը հասնում է կաթողիկոսին և սինոդին ի հաստատություն: Միաբանություն հիմնելու գաղափարն ազգային ինքնաճանաչության նախանշաններից եր: Այդ նշանակում ե, վոր լուսավորությունն ու առաջադիմությունն

արդեն սկսել ելին թեածել խավարամած աշխարհի վրա: Բայց Յեփրեմ կաթողիկոսը, վոր Բողենշտետի ասելով, սրտանց թշնամի յեր ճշմարիտ քաղաքակրթության և գիտության, իր սառն անտարբերութամբ գործը լուսավորյան մատնեց: Զարմանալու պատճառ չկա: Լուսավորության տեղ՝ խայտառակ կոփմներ, բամբառանքներ, առաջադիմության փոխարեն՝ քստմիելի դավեր ու վորոգայթներ, — ահա վանական միջավայրը, վոր խեղդում, վոչնչացնում եր ամեն ազնիվ ձգտում, ամեն բարձր և լուսավոր միտք:

* *

1829-ի ամռան վերջերին, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարբոտն իր մի քանի ընկերներով Հայաստան յեկալ՝ Արարատի գագաթը բարձրանալու: Պարբոտին հարկավոր եր թարգման: Միակ և հարմար թեկնածուն Արովյանն եր: Բացի տեղական լեզուներից՝ հայերենից, աղբրեջաներենից և պարնկերենից, նա գիտեր նաև ոռուսերեն: Հանդիպման առաջին պահեց յերիտարարդ վանականը զրավում է անվանի ճանապարհորդի ուշագրությունը: 1831-ին Պարբոտը հրատարակեց իր նշանավոր „Reise zum Ararat“-ը, վորտեղ նա անվերջ հիշում է Արովյանին և նրա ծառայությունները: Դեպի գի-

տությունն ունեցած իր ծարավով, իր համեստ ձգուռներով, սակավապետությամբ և ջերմեռանդությամբ, ինչպես և իր մտքի հըստակությամբ, որտով և կամքի կայունությամբ, Աբովյանն ամբողջապես նվաճում է Պարրոտի սերն ու համակրությունը:

Սեպտեմբերի 9-ին Պարրոտի արշավախումբը դուրս յեկավ Եջմիածնից: Հանոնելով Մեծուր, ուղևորները մի որ մնում են այստեղ, ապա մեկնում Ակոռի գյուղը, վոր լեռան ստորոտում եր գտնվում: Նրանք տեղափորվում են ու Հակոբի վանքում:

Հետեւյալ որը Պարրոտը, գորապատյան ընկերներից մեկը, Ակոռի գյուղացիներից Սահակը, վոր շատ լավ ծանոթ եր տեղին և լեռան, և մի զինվոր՝ սկսում են վերելքը: Նըրանք փորձում են բարձրանալ արևելյան կողմից: Վերելքը տեսում ե յերեք որ և ունենում ե անհաջող վախճան:

Սեպտեմբերի 18-ին արշավախումբն իր յերկրորդ վերելքն է սկսում: Այս անգամ ուղեվորների խումբն ավելի մեծ եր: Աբովյանը թախանձում է Պարրոտին՝ իրեն ել վերցնել: Պարրոտն սկզբում չի համաձայնում, ասելով, վոր առանց որածայր գավազանի և յերկաթագամ կոշիկների գժվար կլինի: Բայց հետո, անկարող լինելով ընկճել պատահու վոգերությունը, զիջում է: Այս անգամ արշավա-

խումբը վերելքն սկսում է արևմտյան կողմից: Դաժան սառնամանիք ե լինում: Ուղեվորները մի կերպ հասնում են Քեփեգյոլ կոչվող վայրը և այլտեղ ել գիշերում: Հաջորդորը, կանուխ առավոտից շարունակվում է վերելքը: Մի փոքր բարձրունք ել կտրելով՝ ուղևորները հանդիպում են ձյան այնպիսի մի բքի, վոր վերելքը շարունակելու դեպքում իրենց կյանքը վերահաս վտանգի տակ ելին գնելու: Գիշերով ուղևորները վերադառնում են վանք և, վատ յեղանակների պատճառով, սպասում մի քանի որ:

Սեպտեմբերի 27-ին արշավախումբը վերելքի յերրորդ փորձն արավ: Պարրոտի գորպատյան ընկերները հրաժարվեցին մասնակցել:

Դժվար ու ծանը եր յերրորդ վերելքը: Յերկու գիշեր ուղևորները պատսպարվում են մեծ քարերի արանքում, խարույկ վառում, տաքանում: Մի քանիսը թուլացած ընկնում են ճանապարհի կեսին: Մնացածները շարունակում են վերելքը: Հենց վոր յերկում ե գագաթը, բոլորը մոռացած վերելքի անասելի տանջանքները՝ շտապում են ժամ առաջ փոտք դնել լիռան գագաթը:


Սեպտեմբերի 29-ին, որվա կեսին, վերելքի մասնակիցները, թվով վեց հոգի, վոտք գրին Արարատի կատարը: Արշավախումբը

կես ժամ մասում և գագաթի վրա: Յեվ մինչեւ
արել կթիքվեր, Պարզոտը յերկրաբանական
չափութեամբ եր կատարում, իսկ Աբովյանը դի-
տում իր առաջ բացված զմայլելի տեսարանը:

Պատանի կրօնավորն անվանի գիտնականի
առաջ բացում և իր սիրտը: Նա հայտնում է
տարիներով փայփայած իր իղձը՝ գնալ սովո-
րելու, մագլցելու գիտության բարձունքնե-
րով, վոր մարդու միտքն ընդլայնվի, ազնվա-
նա հոգին, բաղձալի կատարելության հասնի,
լեռան գագաթին, այդ նվիրական պահին,
Պարրոտը յերդում է տալիս ազատելու նրան
աղմից, տանելու հետը գեպի լույս:

Վերելքի մասնակիցները, յերբ արդեն որը
յերեկոյանում եր, հրաժեշտ են տալիս գա-
գաթին: Նրանք գիշերում են լեռան կրծքին
և մյուս որն անվտանգ համում վանք:

Պարրոտը մեկնեց, Նա խոստացավ միջնոր-
դել ուր և ում հարկն և անպայման ձեռք
բերել Աբովյանին Դորպատ՝ ուսումնան ուղար-
կելու հարկավոր իրավունքը: Պարրոտից հե-
տո՝ Աբովյանը թաղվեց վարդագույն յերա-
գանքների մեջ: Նա զուրգուրում եր իր ապա-
գա կյանքի գալուստը: Հոկտեմբերի 29-ին
նա դիմում է ներկայացնում սինողին, վոր-
պեսզի թույլ տան իրեն Դորպատ մեկնել
բարձրագույն ուսումնական առաջարկում: Բամբա-
նանքն ու զրապարտությունը բարձրացնում են



Ֆրիզրի Պարրոտ

իրենց տուաը: Կաթողիկոսից սկսած մինչև
վերջին վանականն սկսում են հորդուել Արտ-
վանին հրաժարվելու Պարբուժն տված խոս-
քից: Հլու-հնագանդ մնալ եջմիածնին և, ինչ-
պես առաջ, այսպիսո ել այսուհետ, վանքի կա-
մարների տակ, ծո նկի յեկած, աղոթքներ
մրմիջալ—այն երանանց պահանջը:

Արովյանը համատ և անդրդվելի մնաց: Բայց
նրան միշտ չեր հաջորդում լուռ արհամար-
հությամբ բարձր կանգնել այդ դառնավայ-
րից, չնչին ու խեղճ մարդկանց հասարակու-
թյունից, վոր ճահճի նման ցած եր ձգում
վեր, դեպի վեր սավանու հողին:

Անպակաս եյին ծաղրը, հալածանքը: Դա
ուներ իր խորունկ պատճառները: Պատճառ-
ներից մինն ել Արարատի գագաթը բարձրա-
նալն եր: Այն ժամանակ բերներան եր
անցնում մի հին առասպել: Իբր թե սուրբ
Հակոբը փորձում է բարձրանալ լեռան գլու-
խը՝ իր աշքով տեսնելու Նոյան տապանը:
Մի քիչ բարձրացած՝ սաստիկ հողնում է, ու-
ժամանակ ընկնում: Լայակում աղոթում է
Արտասուքը դառնում է մի աղբյուր: Հան-
դիստ առնելով՝ ծերունին շարունակում է վե-
րելքը դժվարին առապարներով: Քիչ և մնում,
վոր հասնի լեռան կատարը, բայց այլևս կորց-
րած ամեն ուժ է կարողություն, ուժառպառ

ծերունին ընկնում և խոր քնի մեջ: Յերա-
զում հայոնվում է մի հրեշտակ և առում.

— Հակնը, Հակնը, տերը լսեց քո աղերսը,
ահա քեզ մոտ ե տապանի մի մասը, վերցրու
և գնա: Յեզ իզուր մի տքնիք տեսնելու այն,
ինչ աստծո կամքով մարդուց անտես պիտի
մնա:

Յեզ մի պատանի, վորին ըստ յերեսութին,
շատ լավ հայտնի յեր այդ առասպելը, խիզա-
խել եր բարձրանալ լեռան գագաթը, վոտք
դնել նվիրական սրբավայրը: Առավածավախ
կրոնավորների համար այդ մի անսովոր և
հանգույքն քայլ եր: Այդպիսին, նրանց կար-
ծիքով, անպատիծ չպետք և մնար:

Եջմիածնի միաբանության մեջ բալորը յե-
րես գարձրին Արովյանից: «... Ուր վոր միայն
գնում եմ, վիշտը և խոսկությունը ստվերի
նման գալիս են իմ յետեկց», — գանդատվում
է հոգեկան խոռվքի մեջ ընկած Արովյանը:
Նրա միակ միսիթարությունն ու անբաժան
ընկերը ապագայի հույսներ, Դորպատ ընկնե-
լու փափագը:

Հակառակի պես Պարրոտից վոչ մի լուր
չկար, Վանքում փափուց անցավ: յելքուպացին
խարել և հայ պատճառուն: Հուսահատության
հասած Արովյանը մի խնդրագիր ուղարկեց
կայսեր: Իր խնդրագրի մեջ Արովյանն ասում
է, վոր գեռ շատ հին ժամանակներում ազգու-

գումա նպատակներով մեր նախնիները պատահներին ուղարկում եյին Աթենք՝ գիտություն, լուսավորություն ձեռք բերելու։ Այժմ առում ե Աբովյանը, յերբ մեր այժմյան յերջանկությանը նախնիք անգամ կասխանձեն, միթե ուսման գնալու իր բաղանքը մնալու յի անկատար։ «... Զորս ամենայն աւուրս հառաջանօք անցուցանեմ, առ որ եղի ի մտի այժմ կամ հասանել բաղանաց իմոց, կամ տալ զանձն իմ ի վտանգ կորստեան»,—գրում ե Աբովյանը կայսեր իր «խոնարհամատոյց պաղատանքի» մեջ։

Անհամբեր Պարբոտից կամ թագավորից թույլտվությունն ստանալու, մի վերջին փորձն ե անում Աբովյանը։ Դիմում ե Յերեմին։ Պատանուն հաջողվում ե թախանձագին աղերսներով կոտրել կաթողիկոսի համառությունը։ Յեփրիմը կոնդակ է արձակում, վորով թույլատրում ե Աբովյանին սովորելու գնալ։ Բայց այս անգամ ել, ինչպես յերեսում ե, արդելք են լինում ծնողները, վորոնք չեն ուզում դարիբության մատնել իրենց վորուն։

Հուսախարության պահեր շատ ունեցավ ուսումնածարավ պատանին, մինչև վոր 1830-ի գարնանամուտին ստացվեց Պարբոտի նամակը Աբովյանի անունով։ «Սիրելի բարեկամ, — գրում ե Պարբոտն այդ նամակում, — ձեր վեճակը վորոշված ե, կատարվել ե՝ ինչ ցանկա-

նում եյիք։ Անհամբեր սպասում հմ ձեր ուրախաբեր գալստյան»։

Աբովյանն իր բախտն այլևս վճռված էր համարում։ Յերազանքը դառնում եր իրականություն։ Նա այլևս շրջապատված չեր լինելու բամբասանքներով, դափերով։ Աբովյանը հեռանալու յեր վանքից, վորի ծխամած կամարների տակ կարող եր միայն նրա ճախրանքի բնդունակ հոգին շատ շուտ հանդչել, ծխացող մոխիր դառնալ։

*
**

Հրաժեշտի պահին մի խումբ հոգեվորականներ հարձակվում են նրա վրա, խլում շորերն ու ճարի պաշարը, մի խոսքով՝ անարդ կերպով վանդում նրան վանքից իրը անհավատի։ Միակ հարազատ վայրը, ուր կարող եր պատանին թափել իր հոգու դառնությունը, հայրենի տունն եր։ Սիրելի ծնողների գիրկն ընկած ապագա պանդուխտը գտավ իր վերջին միխթարությունը։ Աբովյանի մեջ այնքան ուժգին եր Դորպատ գնալու փափակը, վոր այս անգամ նա ուշագիր չեղավ նույնիսկ ծնողների պաղատանքին։ Յեվ արտաքալիմ աչոք հրաժեշտ տվեց նա ծնողներին, հայրենի խրձիթին և ճանապարհ ընկած դեպի Դորպատ։ 1830-ի սեպտեմբերի առաջին որերին Աբովյանը հասավ Դորպատ։ Աբո-

կուտ նպատակներով մեր հախնիները պատահնիներին ուղարկում եյին Աթենք՝ գիտություն, լուսավորություն ձեռք բերելու։ Այժմ առում ե Արովյանը, յերբ մեր այժմյան յերջանկությանը նախնիք անդամ կնախանձեն, միթե ուսման գնալու իր բաղձանքը մնալու յի անկատար։ «... Զորս ամենայն աւուրս հառաջանօք անցուցանեմ, առ որ եղի ի մտի այժմ կամ հասանել բաղձանաց իմոց, կամ տալ զանձն իմ ի վտանգ կորստեան»,—զրում ե Արովյանը կայսեր իր «խոնարհամատոյց պաղատանքի» մեջ։

Անհամբեր Պարբուից կամ թագավորից թույլտվությունն ստանալու, մի վերջին փորձն ե անում Արովյանը։ Դիմում ե Յեփրեմին։ Պատանուն հաջողվում ե թախանձագին աղերսներով կոտրել կաթողիկոսի համառությունը։ Յեփրեմը կոնդակ է արձակում, վրով թույլատրում ե Արովյանին սովորելու զնալ։ Բայց այս անդամ ել, ինչպես յերեսում ե, արդելք են լինում ծնողները, վորոնք չեն ուզում դարիբության մատնել իրենց վորդուն։

Հուսախարության պահեր շատ ունեցավ ուսումնածարավ պատանին, մինչև վոր 1830-ի գարնանամուտին ստացվեց Պարբուի նամակը Արովյանի անունով։ «Սիրելի բարեկամ, — զրում ե Պարբուն այդ նամակում, — ձեր վեակը վորոշված ե, կատարվել ե՝ ինչ ցանկա-

նում եյիք։ Անհամբեր սպասում եմ ձեր ուղախարեր գալույան»։

Արովյանն իր բախտն այլևս վճռված եր համարում։ Յերազանքը դառնում եր իրականություն։ Նա այլևս շրջապատված չեր լինելու բամբասանքներով, դավերով։ Արովյանը հեռանալու յեր վանքից, վորի ծխամած կամարների տակ կարող եր միայն նրա ճախրանքի բնդունակ հոգին շատ շուտ հանգչել, ծխացող մոխիր դառնալ։

* * *

Հրաժեշտի պահին մի խումբ հոգեվորականներ հարձակվում են նրա վրա, խլում շորերն ու ճարի պաշարը, մի խոսքով՝ անարդ կերպով վոնդում նրան վանքից իբր անհավատի։ Միակ հարազատ վայրը, ուր էարող եր պատանին թափել իր հոգու դառնությունը, հայրենի տունն եր։ Սիրելի ծնողների գիրկն ընկած ապագա պանդրեստը գտավ իր վերջին միիթարությունը։ Արովյանի մեջ այնքան ուժգին եր Դորպատ գնալու փափագը, վոր այս անդամ նա ուշադիր չեղավ նույնիսկ ծնողների պահատանքին։ Յեվ արտապալիճ աչոք հրաժեշտ ավեց նա ծնողներին, հայրենի խրձիթին և ճանապարհ բնկավ դեպի Դորպատ։ 1830-ի սեպտեմբերի առաջն որերին Արովյանը հասավ Դորպատ։ Արո-

վյանը մի նոր և անծանոթ աշխարհ եր ընկել։
Առաջին որերը խորթություն եր զգում նոր
միջավայրում, մի տեսակ՝ ճնշվում եր, կամ
ինչպես ինքն ե առում, «որտնեղությունք»
զգում։

Սեպտեմբերի 29-ին Պարրոտի տանը հաց-
կերույթ կար։ Հրավիրված եյին շատ հյու-
րեր, գլխավորապես պրոֆեսորներ։ Մի խոռ-
քով՝ այսուեղ եր հավաքվել Պորպատի
գիտական միտքը։ Հրավիրվածների մեջ
եր նաև Արովյանը։ Որը նշանավոր եր։ բո-
լորել եր Արարատի գագաթը բարձրանալու
առաջին տարին։ Այդ յերեկո Պարրոտը հյու-
րերին ներկայացրեց իր հայ բարեկամին, վո-
րը նշանավոր վերելքի ամենակրոսներ մաս-
նակիցն եր։ Բոլորը շրջապատեցին նրան, գո-
վեցին նրա յեռանդը, լուսավորության ձեզ-
տումը։ Հյուրերի խնդրով Արովյանը կարդաց
Արարատի գագաթը բարձրանալուն նվիրված
իր մի բանաստեղծությունը գրաբար լեզվով։

Պարրոտի խորհրդով Արովյանը համալսա-
րան չընդունվեց։ Գերմանացի պրոֆեսորն
այն կարծիքին եր, վոր Արովյանը մասնա-
գիտական կրթություն չպետք ե ստանա, յե-
թե, իհարկե, ցանկանում ե իր ժողովրդին
ոգտակար լինել։ Պարրոտը խորհուրդ եր տա-
լիս նրան ուսանել այն բոլորը, ինչ վոր կա-
րող ե հարկավորվել մի ուսուցչի, վորը պետք

վերագաւառա յերկիր՝ գրագիտություն, լու-
սավորություն տարածելու, Յեվ ժողովուր-
դը, — զգուշացնում եր Պարրոտը նրան, — յեր-
բեք չի մոռանա այդպիսի մարդու յերախ-
տիքը։ Ճաշին մեծ մասամբ Արովյանը Պար-
րոտների մոտ եր լինում, իսկ յերեկոները՝
Քրասսի, վոր Դորպատի յերիտասարդ պլո-
ֆեսորներից եր։ Մի բաժակ թեյի շուրջ նըս-
տած՝ հայ և գերմանացի յերիտասարդները
զրուցում եյին, պարապում։ Գրասսը վճէ
միայն աշխարհագրական գիտելիքներ եր հա-
ղորդում իր հայ բարեկամին, այլև գերմա-
նական բանաստեղծության սքանչելի նմուշ-
ներից եր կարդում նրան։ Գրասսի սիրալիքը
վերաբերմունքը, բնության պարզությունն ու
անմիջականությունը հափշտակում են Արո-
վյանի զգայուն սիրալը։ Գրասսն իր մտերմին
ծանոթացնում ե ուրիշ յերիտասարդների հետ։
Հետզհետեւ Արովյանի ծանոթների շրջանն ընդ-
լայնվում ե, մեծանում։ Ամենուրեք շրջա-
պատված գուրգուրանքով, բարեկամական հո-
գատարությամբ, մշտական ուշազորությամբ՝
Արովյանը կամաց-կամաց ընտելանում ե նոր
միջավայրին, նրա վարք ու բարքին։

Պարրոտի բարեկամներն ու ծանոթները,
վոր մեծ մասամբ գիտնականներ եյին, սիրով
պարտավորություն առան ոգնել հեռավոր
յերկրից յեկած հայ պատանուն։ Պարրոտը

Նրա կետ պարապում եր գերմաներեն և այլ
առարկաներ: Պրոֆեսոր Բլյումբերգը նրա հետ
անցնում եր պատմության դասընթացը, իսկ
պրոֆեսոր Ֆրիդլենդերը՝ մաթեմատիկայի,
Գրասու՞ աշխարհագրության: Ուրիշներն ել
պարապում եյին բնագիտություն, փիլիսո-
փայություն և այլ առարկաներ: Կարճ ժամա-
նակից Աբովյանը գերմաներենին տիրապե-
տում և գրեթե իր կատարելության մեջ: Պրո-
ֆեսորները վկայում են, վոր նա շատ շուտ
սովորեց գերմաներեն գրել-կարդալ իսկ խո-
սում եր այնպես, վոր գժվար եր նույնիսկ
կառկածել, թե նա հայ և կոչ գերմանացի:
Նա սկսում է սովորել Գրանսերեն, վորին մի
փոքր ծանոթացել եր ներսիսյան զպրոցում:
Կատարելագործում ե ոռուսերենի իմացու-
թյունը, ձեռնարկում ե լատիներեն սովո-
րելուն:

Դորպատյան տարիներն Աբովյանի մտա-
վոր կյանքի հասունության շրջանը յեղան:
Թիֆլիսում, հետո ել Եջմիածնում, նա մո-
տիկից ծանոթացել եր հայ պատմիչներին:
Միայն այժմ նրա միտքն սկսում ե հածել
աշխարհի մեծագույն քերթողների գրքերի
վրա: Դորպատը բազում առիթներով ոռման-
տիկական ներշնչումների աղբյուր եր: Դոր-
պատում եր այդ ժամանակ Ֆրիդրիխ Կին-
գերը, վորի մի դրամայի անունով ել մկըրտ-

վել եր ոռմանտիկական ուղղությունը գեր-
մանական գրաւանության մեջ: Ծանոթ ե յե-
ղել Աբովյանը հետը, թե վոր հայտնի չե,
բայց անկարելի յե, վոր նա տեսած չինչի
համբավավոր ծերունուն, վոր շրջելով Դոր-
պատի փողոցներում՝ դորպատյանների հիշո-
ղության մեջ վորեկում եր այն ազնիվը ու
բարձրը, վոր քարոզում եր Sturm und Drang-
յան ոռմանտիզմը: Տիրելով գերմաններնին
Աբովյանը գիշերներ ե լուսացնում Գյոթեյի
ու Շիլերի գրքերի վրա: Մի Գրանսիֆացի,
վոր հետո ծանոթացել եր Աբովյանի հետ, ա-
սում ե, վոր Աբովյանը Շիլերին ջրի պես զի-
տեր: Յեկ դեռ Դորպատում Աբովյանը հայե-
րեն ե թարգմանում Գյոթեյի ու Շիլերի բա-
նաստեղծությունները: Նա բնագրով կարդում,
ծանոթանում է Լիսինգին, Հերդերին: Աբո-
վյանը կարդում է Ռուսսոյին, վորեկում
նրա գաղափարներով: Իսկ շատ տարիներ հե-
տո, ըստ յերևութին, Յերևանում ձեռնարկում
ե «Նոր Ելտիզի» թարգմանությանը: Լատի-
ներենն ոգնում ե նրան ծանոթանալու ան-
տիկ գրականությանը: Կարդում ե Հոմերո-
սին, Սոֆոկլեսին, հոովմեականից՝ Վերգիլիո-
սին, Հորացիուսին, իտալականից՝ Դանտեյին,
Պետրարկային: «Իլիականից» հատվածներ ե
թարգմանում: Անձամբ ծանոթանում ե ոռու-
սական որմանտիզմի մեծագույն ներկայա-

ցուցչին, ժուկովսկուն, վորն իտալիայից դառնալով Ռուսաստանը մոնթանյան վողջույն հաղորդից արարատյան յերկրի զավակին: Թարգմանում և կարամզինին: Փիլիսոփաներից ծանոթանում եւ կարամզինին: Ֆիլիսոփաներից ծանոթանում եւ լայբնիցի, Հեգելի, մանկավարժներից՝ Նիմայերի, Կամպեյի, Կրառելի և ուրիշների գործերին:


Դորպատյան միջավայրն իր կնիքը դրեց Արովյանի քաղաքական հայացքների վրա: Այն յերկությունը, վոր նկատելի յի Արովյանի մտայնության մեջ, մեծ մասով ակունք և առնում Դորպատից: Դորպատ նոր յիկած Արովյանի հոգեբաննության ու մտածական աշխարհի մեջ զեր կային, վոր, անշուշտ, արդյունք եյին եջմիածնական մթնոլորտի աղղեցության: Հայրենասիրությունն Արովյանի մոտ այժմ մի նոր յերանդ ստացավ, իր ակունքն առնելով յելրոպական լուսավորչական շարժման գաղափարներից: Բայց Արովյանի հայացքների կաղապարման վրա մեծ աղղեցություն ուներ նաև Դորպատի անմիջական շրջապատը: Արովյանի աչքի առաջ անցավ Բուրշենշափու կոչվող գաղտնի ուսանողական ընկերության դատը: Զեր կարող նրա վրա ցնցող աղղեցություն չթողնել այն դաժան կարգն ու կանոնը, վորի կրնկի տակ տրորվեցին յերիտասարդ գորպատականների աղղային-լուսավորչական ազնիվ յերա-

զանքները: Բայց այդ, անպայման Արովյանի ականջին հասավ Բեղիայի անկախության ապօտամբ կովի զենքի շառաչը: Բեղիականին անմիջապես հաջորդեց ապօտամբություն Լեհաստանի ներսում: Հաղիվ թե այդ պոռթկումները հուզումնալից զրույցների տեղիք չտային այն յերիտասարդական շրջաններում, վորտեղ Արովյանը լինում եր: Պատահող քաղաքական իրադարձություններն անկարելի յե, վոր առիթ չտային յերիտասարդ հայրենասիրին զուգահեռազծեր անցկացնելու ապօտամբ ժողովուրդների և իր ժողովրդի բախտի ու ճակատազրերի միջև: Զի՞ վոր այդ բոլորն արդյունք եր այն ազգային ճնշումների, վորոնց յենթակա յեր մյուսների հետ և Արովյանի ժողովուրդը: Բայց այն մարդիկ, վոր անմիջապես շրջապատում եյին Դորպատում Արովյանին, մեծ մասամբ չափափոր հայացքների տեր մտավորականներ եյին, Զի կարելի առել, թե նրանց խորթ եր ազատության գաղափարը: «Յաղատութեն է յառաջանա ամենայն բարիք», — ասում ե պրոֆեսորներից մեկն Արովյանին: Բայց ժանդարմեական սապողի կրունկն անխոհորեն ճգմել եր ամեն մի հանդուգն միտք: Պարրուը, վորի հորդորներն ու զրույցները միշտ լսում եր Արովյանը, զգուշացնում եր հեռու մնալ խոռվարար յերիտասարդներից, չշփկել

Նըանց հետ, չստեղծել վատանգավոր կապեր;
 Պատահած քաղաքական իրազարձությունները
 Պարբռտի զբույցների աղղեցության տակ
 կողցնում եյին իրենց ոոմանտիկական հմայ-
 քը: Նա կարողացել եր Աբովյանին խոր յե-
 րախտագիտության զգացում ներշնչել դեպի
 ցարը, վոր «ընդառաջ եր զնացել նրա բազ-
 ձանքին», միջոցներ տվել սովորելու, ուսում
 ստանալու: Բուրգերը և ուրիշ պրոֆեսորներ
 լուսավորության մեջ եյին տեսնում հայերի
 փրկությունը, արթնացնել ազգային հոգին,
 լուսավորել դրանից հետո «մնացածն ինքն
 իրեն կլինի»: Յերբ մի ժողովուրդ լուսավոր-
 ված ե, դժվար ե նրան քաղաքական ստրկաց-
 ման յենթարկել, և, վերջապես, այդպիսի մի
 ժողովուրդ կունենա այնքան ազգային ար-
 ժանապատվություն, վոր թույլ չի տա իրեն
 ճիպոտահար անելու: Լուսավորություն տա-
 րածել ժողովրդի մեջ, քաղաքակրթել յերկի-
 րը, ապա նոր, մի ընդհանուր և միասնական
 հայրենիքի մասին մտածել:

Ահա այս քաղաքական մտայնությունը
 ներշնչեց նրան դորպատյան միջավայրը:

Առում են, վոր «հայրենի յերկրի կարոտը
 հանգիստ չեր տալիս նրան»: Պատմում են,
 վոր Աբովյանի տան առաջ մի մենավոր ծառ
 ե յեղել: Պանդուխտ յերիտասարդը լուսնկա
 գիշերներին նստում եր այդ ծառի տակ, մեջ-



Գուգարակության պատմություն

Քը բնին գեմ՝ առալիս, աչքերը յերկնքին զցած՝
դրուցում լուսնի ու աստղերի հետ իր հայրենի աշխարհի մասին։ Շատ անգամ ել արցունքն աչքերին, յերգում եր, ու այդ կարոտի յերգերի վրա իշխում եր մի անհուն թախիծ։
Հայրենիքից տխուր լուրեր եր առնում, Վախճանվում ե հայրը, ափազակների ձեռով սպանվում ե ուսուցիչը, Ալամդարյանը։ Վշտից Արովյանն անկողին ե ընկնում, Բարեկամները շրջապատում են նրան, վոր շատ չարտմի։
Բայց դժվար եր ամոքել նրա վերքը։ «Լուսահոգի հոր հիշտակին» մի սրտառուչ բանաստեղծություն ե գրում։ Իր մի ծանոթի ուղարկած հոդվածն Ալամդարյանի մասին թարգմանում ե գերմաներեն և հրատարակում տեղական թերթերից մեկում։ Ալամդարյանի պատճառով ընդհարվում ե «Северная пчела»-ի իմբրագիր, ուստ գրող, յերդորդ բաժանմունքի լրտես Բուլգարինի հետ։ Այս բոլորը պատճառ եյին, վոր նրա միտքը թե առած թոշեր դեպի հայրենի լեռներն ու ծորերը, «ի գեշերի և ի տուանջեան ոլանան, վերանան ի միտս այս նազելի կողման Արարատայ, —յորս երբեմն խաղայի զխաղ ոռկեղեն մանկութեան խմոյ»—հառաշանքով զրում ե Արովյանն իր մի նամակում։ ՅԵՐ նորից պետք ե, հարցնում ե նա, իր աչքերը տեսնեն հայրենի ծուխը, յԵՐ պետք ե կրկին

ծիծաղաղիմ իր առաջ յելնեն Հայաստանի լեռները, յԵՐ պետք ե դարձյալ ծծի անմռուանլի հայրենիքի ծաղկաբեր դաշտերի վրայով նազանքով անցնող հարավային մարմանդ զեփյուրը, Պահմթեխստ Արովյանի մեջ նոտած եր խանդավառ հայրենասերի հոգին։ Որ ու գիշեր նրան մտատանջում եր հայրենիք վերադառնալու, ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու միտքը։ Այդ գաղափարը նրան այնքան եր զբաղեցնում, վոր մի գիշեր ել յերազ ե տեսնում իբր թե ինքն արդեն Հայաստանումն ե, յեկեղեցում հասարակության առաջ քարոզ ե ասում։ Հանկարծ ներս ե մըտնում Պարուտը։ Պատկառանքից Արովյանը կարկամում ե, մինչև վոր անվանի գիտունը խրախուսական խոսք ե առում։ «Սովորեցրեք հայ մանուկներին; սովորեցրեք, ինչու լոեցցիք»։ Այս մի հատիկ որինակն ել բավական ե գաղափար կազմելու, թե ինչ խոներ ու հույզեր եյին փոթողկում ապագա առաքյալի միտքը։

Ցեֆե ուզեր, նա կմնար այդ լուսավորված աշխարհում, ապահով ու հանգիստ կյանք կթտեղծեր իրեն համար։ Շատ դժվար եր հեռանալ և այլև չդառնալ Դորպատ, ուր այնքան շատ բարեկամներ ու ծանոթներ ուներ, ուր չընալ կոտտեն նրան ալսքան հրճվանք ու բերկրություն բերեց։ Այս, շատ բան նրան

կապում եր Դորպատի հետ, սակայն ունալն
այլևս անկարելի յեր Աբովյանը չեր ուզում
Նոյան ադուավ լինել: Նա յերբեք չմոռացավ,
վոր ինքը, գեռ քսանամյա պատանի, Արա-
րատի գագաթին ուստ եր կապել գնալ, ոռ-
վորել վերադառնալ յերկիր, գործել ժողովրդի
մեջ: Հայրենիքն սպասում եր: Պետք եր
շտապել:

1836-ի գարնանն Աբովյանը հրաժեշտ ավագ
Դորպատին: Նա վերադառնում եր հայրենիք
հեղաշրջած: Ֆորալատյան կյանքը մի շատ
կարեռ, ճակատագրական դարձակեատ յեղագ
նրա կյանքում: Դա յեղագ նրա յերկրորդ
ծնունդը: Աբովյանը մեկնել եր Դորպատ գրե-
թե միջնադարյան հայցքներով, սահմանա-
փակ գիտելիքներով, բնավորությամբ կատա-
րելապես նախապետական գեղջուկ, ասիական
հետամնացության դրոշմը մտքի և հոգու վրա:
Այժմ այնտեղից նա դառնում եր իբրև մի
լուսավորված, կրթված մարդ, գիտուն, բազ-
մահյաց, կատարյալ յեվոպացի: Բողեն-
շտեալ խոսքերով առած՝ նա դառնում եր
հայրենիք իբրև գիրմանական և ընդհանրա-
պես յեվոպական առաջավոր կուլտուրայի
առաքյալ արևելքում:

*
**

Աբովյանն շտապում եր հայրենիք: Վար-

դագույն հույսերի մեջ եր: Ճանապարհին գոր-
ծունեյության ծրագրեր եր կազմում: Նա փա-
փագում եր Եջմիածնում յեվոպական հի-
մունքներով գալրոց հիմնել, ժողովրդական ու-
սուցիչներ պատրաստել: Բայց, ավագ, մի խոր
հիասթափություն եր սպասում նրան:

Թիֆլիսում նա հանդիպեց Հովհաննես Կար-
բեցուն: Աբովյանի հակառակորդներն արդեն
կարողացել եյին կաթողիկոսին ներշնչել այն
միտքը, թե նա լութիրական ե, հավատից,
յեկեղեցուց շեղված: Աբովյանը ներկայացավ
կարբեցուն «ոտար դավանությունների» նա-
խարարի հանձնարարական նամակով: «Հրա-
մանմաւ գառ ի վերայ իմ, վտարանդեալդ ի
հաւատոյ, գուր լաւ խմորել կարես զմիտր ան-
մեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ», — այս
խոսքերով դիմավորեց կաթողիկոսն Աբո-
վյանին:

Աբովյանը միայնակ մնաց: Բոլորը յերես
գարձեին նրանից: Նա այլիս կովան չուներ:
Հուսախաբ յեղած Աբովյանին հարկավոր եր
բոպե առաջ հրաժարվել Եջմիածնի հետ կա-
պած հույսերից, բայց նա այն ժամանակ
այնքան ուժ և կորով չգտավ իր մեջ: Նա
չկարողացավ այլել այն կամուրջները, վոր
նրան կապում եյին յեկեղեցու հետ: Ինքն
իր մտորումների հետ՝ Աբովյանը դեգերեց
Թիֆլիսում, քաղցի մատնված: «Զամ միս

և կէս մնացի ի Յփիսո՞յ յնտ վերագարձի իմոյ
Եւրոպիով կարօս և աւուրջն պարհնի: Զար-
քունական ծառայութիւնն յամնայն ըոպէի
առաջազրէյին ինձ, այլ իմ իոդ և նպատակ
էր ոչ թողուլ զհոգեւորական կոչումն իմ»,—
հիշում և Աբովյանը տարիներ հետո:

Բայց այդպես շաբանակել անկարելի յեր:
«Ստիպեալ ի չըաւորութենէ մտի ի պաշտօն
արքունական, զոր ոչն երբէք կամէի»—գրում
և Աբովյանը: 1837-ի փետրվարի 12-ին Աբո-
վյանը նշանակվում է Թիֆլիսի գավառական
ուսումնարանի տեսչի պաշտոնակատար:

Յերեննական թ.թ., այսինքն Աբովյանի
ժամանակ, Թիֆլիսն Անդրկովկասի կուլտու-
րական կյանքի առանցքն եր: Դա մի բազ-
մազգի ընտանիք եր՝ հայ, վրացի, ադրբեջան-
ցի, ուռու, գերմանացի, ֆրանսիացի—վորքան
կուզեք: Ռուս հեղափոխականների համար
Թիֆլիսը դառել եր աքառավայր: Դեկաբ-
րիստներից մի քանիքը, ինչպես և ընդհան-
րապես քաղաքականապես անբարեհույս ճա-
նաչված ուռու մտավորականներն ու գործիչ-
ներն աքսորված եյին Թիֆլիս: Այդ տարինե-
րին, ինչպես և մի փոքը առաջ, Ռուսաստա-
նում խուլ և լսելոյան, հեռուներում ավելի
ափաշկարա, առաջավոր միտքը հուզված հե-
տեւմ եր սեակցիային, վորի կրնկի տակ

տրուլում, ձգմվում եր ամեն աղնիվ ճշմար-
տություն, ամեն բարձր միտք:

Պաշտոնի անցնելով Թիֆլիսում՝ Աբովյանը
սկսութ և ապրեր, շնչեր այդ մթնոլորտում:
Անկարեկի յեր, վոր նրան լավ չճանաչեյին
քաղաքում, վորովհետեւ Խորպատից եր յեկել,
համալսարանականի համբավ ուներ, լեզուներ
գիտեր, մի խոսքով՝ իր ժամանակի կրթված
մարդկանցից մեկն եր, այսինքն՝ այնպիսի
մեկը, վորի նմանները շատ քիչ ու հազվա-
գեպ եյին այն ժամանակ Թիֆլիսում:

Ուսումնարանում Աբովյանը ծանոթանում
և Միքա Ֆատալի Ախունդովի հետ—ադըր-
բեջանական նշանավոր գրող և Փիլիսոփա,
վորի վրա Աբովյանը, անշուշտ, մեծ ազգե-
ցություն և ունեցել: Միասին նրանք աշխա-
տում են մինչև 1840-ը: Հոժարակամ հեռա-
ցած Ախունդովին փոխարինում և մի այլ
պակաս նշանավոր դեմք, ադրբեջանա-
կան հայտնի բանաստեղծ, հետագայում հա-
մայնկրապական հաշակ ձեռք բերած Միքա
Շաֆին, վորն ընկերների ըրջանում, Բողեն-
շտետի արտահայտությամբ՝ «Դյանջայի ի-
մաստունի» համբավ ուներ: Պահպանվել ե
այն գեկուցագիրը, վորով Աբովյանն անձամբ
յերաշխավորել և Միքա Շաֆուն բարձրա-
ցույն իշխանությունների առաջ, գլորցում
գույն իշխանությունների առաջ, գլորցում

անձնական և իմացական արժանավորությանները: Ինչպես Ախունդովի, այնպես ել տռավել ևս Միրզա Շաֆու հետ, Աբովյանը բարեկամական անխափատ կապերի մեջ և յեղել: Լավը, աղնիվը ու մարդկայինը առըբեշանցի և հայ գործիչներին միացրել եր մի ջրմ, անքակտելի բարեկամությամբ:

Աբովյանը ծանոթություն և ունեցիլ վրացի մտավորական Զուբալաշվիլու հետ: Սա: Նազարյանի վկայությամբ՝ Զուբալաշվիլին համամիտ եր հայ և վրացի ժողովուրդների վերածնության մասին ունեցած իր և Աբովյանի հայացքներին: Զուբալաշվիլին առաջին վրացին եր յելրոպական կրթությամբ: Մի շարք լեզուներ և իմացել: Դեռ այն ժամանակ բնադրով կարգացել և «Այլինդոն», շրջել և յելրոպական քաղաքները, Դորպատում ծանոթացել և Նազարյանի հետ:

Աբովյանի թիֆլիսյան ծանոթներից եր նաև գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Բուդենշտերը, վորի համար նա հավաքել եր քրդական և աղքաբեջանական ժողովրդական յերգեր: Աբովյանը ծանոթ և յեղել նաև ուկրաինական բանաստեղծ Ռուկովչենկոյի հետ: Այս եր նրա միջավայրը Թիֆլիսում:

Ուսումնաբանում նրան շրջապատում եյին հայ յերեխաների հետ նաև վրացի և աղքաբեջանցի մանուկներ: Մանկական աշխար-

հը,—ինչպես յերեսում և Ֆրենին գրած նամակից.—վաղուց ի վեր յեղել և Աբովյանի համար ըոլոր յերկրային սրտահաճ բախտավորություններից ամենաբարձրը, նամանավանդ, վոր այդ յերկու հարյուրի չափ աշակերտներն իրենց սերն ու համակրությունն են պարզեել նրան:

Աբովյանը հիմնում և նաև մի մասնավոր զպրոց: Ակզեռում վանքի բակի միակ խցում, իսկ հետո՝ իր տանը հավաքում և մի խումբ հայ, աղքաբեջանցի և գերմանացի յերեխաներ, թվով 25 հոգի և պարապում հետներն իր ուղածի պես:

Ճանապարհորդ Մորից Վագները, վոր եր գրքում բավական եցեր և նվիրել Աբովյանին, պատմում և նրա աշակերտների ուսումնական առաջադիմությունը: Այն, ինչ տեսել և Վագները, մի կատարյալ անակնկալ եր յելրոպացու համար: Նա պատմում ե, վոր 10-14 տարեկան աղաները շատ լավ կարդում և գրում եյին հայերեն, աղքաբեջաներեն, ուռուերեն, Փրանսերեն և մանավանդ, գերմաներեն: Վագները «լսեց գերմաներեն մեր կարդալը, խոսելը, զարմանք հայտնեց մեր առաջադիմության վրա,—պատմում և Աբովյանի աշակերտներից Աքիմյանը,—վարժապետ աշակերտներից գերմաներեն հարցեր եր տալիս, մենք նույն լեզվով աղատ պատասխա-

նում եյինք: Վագները հիանում եր, յերբ յեռ
Շիլեր եյի կարդում ու իմ բառերով պատ-
մում, իսկ Խատիսյանց Գաբրիելը՝ Գյոթեյի
վոտանավորներն եր կարդում ու արձակ
պատմում»:

Մասնավոր դպրոցի վրա պետական-չինով-
նիկական աշքը չեր հսկում: Մանավանդ վոր
դպրոցն Աբովյանը հիմնել եր 1837-ին, թա-
գուն պետությունից, իսկ պաշտոնական
թուլտվություն ստացել եր միայն 1840-ին:
Աբովյանն անում եր կամեցածը: Աշակերտ-
ների ձեռից վերցնելով Սաղմոսը, ավետարա-
նը, Աբովյանը նրանց ձեռն և տալիս Գյոթեյի
և Շիլերի գրքերը: Իր աշակերտների համար
նա փորձում ե կազմել ուսումնական ձեռ-
նարկներ հայերեն լեզվով: Նախ կազմում ե
«Նախաշավիղը» (մի այլբենարան իր ընթեր-
ցարանով): Այնուհետև կազմում ե մի աշ-
խարհագրական ձեռնարկ, վորը բացվում ե
«Ամերիկու լուս քցիլը» ակնարկով: Յեն վեր-
ջապես «Ռուս տեսական և գործնական քե-
րականություն հայերեն լեզվով ըստ Տապահի»:
Վերջին ձեռնարկով Աբովյանը փորձում ե
հեշտացնել ուսւ լեզվի ուսումնասիրությունը
հայերի մեջ: Նա դատապարտում ե ուսուերեն
խոսքերը լատինական տառերով գրելու յե-
ղանակը: Նա չի ընդունում նաև ուսւ լեզվի
առանձին հնչյունները հայերեն տառերով ա-

վանդելու ձեզ և առաջ ե քաշում ավելի ճիշտ
և նպատակահարմար տրանսկրիպցիաի անցա-
նելու պահանջը: Նույն պահանջը, Աբովյանից
անկախ, առաջ եր քաշել նաև գերմանացի
հայկաբան Պետերմանը:

Աբովյանը, ինչպես պատմում են նրա ա-
շակերտները, անչափ զգայուն, ջղային մարդ
եր: Ամենաթեթեկ առիթից հուղվում, բորբոք-
վում եր: Իբրև մանկավարժ շատ խօսու եր:
Չեր կարողանում տանել, յերբ մեկը դասի
ժամանակ անուշադիր եր մնում զեաի իր
խռաքը: Համբերությունից դուրս յեկած՝ յեր-
բեմն դիմում եր ծեծի, թեև ոկզբունքով դեմ
եր գըան: Որինակի Գաբրիել Սունդուկյանը,
վոր նույնպես յեղել ե Աբովյանի աշակերտ-
ներից, պատմում ե, թե ինչպես մի քանի
անգամ իր յեղբորը, Միքայելին, դասի ժա-
մանակ Աբովյանը նկատողություն ե անում
վոր ուշքը վրեն պահի, յեղբայրը չի լսում:
Բարկացած՝ Աբովյանն ականջից քաշում ե:
«Բայց նա անչափ նրբազգաց սիրու ուներ, —
պատմում ե Աքիմյանը, — քիչ ժամանակից
հետո սկսում եր ծեծված աշակերտին փայ-
փայել և իրա արածի վրա արտասվելու չափ
զգացվել»: Բոլոր աշակերտներն ել առում ե-
յին, վոր նա միայն ուսուցիչ չեր, այլ հոգա-
տար հայր:

* *

1838-ին Աբովյանը խճերատու յելինում եղմիածնի սինոդին իրեն հոգեոր կոչումից ազատելու մասին։ Պատճառներից մեկն ել մի մատաղահաս գերմանուհի յեր, Եմիլիա Լոռողե անունով։ Աբովյանն Եմիլիային հանդիպել եր Թիֆլիսի գերմանական գաղութում, ուր հաճախ, վշտացած պահերին, գնում եր վերհիշելու իր գորպատյան կյանքի տարիները։ Սիրահարված քանամյա Եմիլիային՝ Աբովյանն անհամբեր սպասում եր սինոդի վճուհն։ 1839-ի սկզբներին պատասխան ստացվեց։ Աբովյանն այլևս հոգեվորական չեր։ Նույն տարվա աշնանամտին Աբովյանը և Եմիլիան ամուսնացան։

* *

Աբովյանին չեյին հասկանում։ Նա բարձր եր կանգնած ժամանակից և միջավայրից։ Մենակ եր ու անողնական։ Եղմիածնի ու հոգեվորականության հետ վաղուց գժտված եր։ Առևտրական դասը յերբեք ընդառաջ չգնաց նրա լուսավորչական ծրագրերին։ Բարձր պաշտոնեյությանը, ինչպես յերեւմ և, այսքան ել բարեհուսություն չեր ներշնչում դորպատյան համալսարանականը։ Իսկ նրա անմիջական շրջապատը մի կատարյալ ճահիճ

եր։ Պաշտոնակիցների հնավանդ հայացքները, մանկավարժական անկարողությունը, նաև խամաճն ու չարակամությունը խանգարում ելին նրան փոխելու դպրոցի ներքին կյանքը, յելքուպական հողի հաղորդելու նրա ուսումնական առողջացին։ Աբովյանն ամենուրեք հանդիպում եր անտարբերության։ Նրան շրջապատում եր թշնամությունը։ Անպակաս եր վրագայթն ու գավը։ Նա ազատում չուներ այդ մարդուկներից։ Նրանք կրնկակոխ հետևում ելին Աբովյանին, զրպարտում, դավեր սարքում նրա դեմ։ Առաքյալին ստիպում ելին պատիկանալ, նմանվել մյուս չինովնիկներին, դառնալ մի սովորական քաղքենի, հրաժարվել այն բարձր իդեալներից, վորոնք այնքան հմայք ունեյին նրա աչքում։

Ինչպես շուտ վոգեռվող, այնպես ել շատ շուտ հուսահատվող, ընկճվող եր Աբովյանը։ Ծանր ու անմիխթար որեր շատ ապրեց։ Ակադեմիկոս Ֆրենին և Ստ. Նազարյանին գրած նամակներն Աբովյանի հոգեկան փոթորկումների լուս հուշագրերն են։ «Յես տարութերվում եմ տաշեղի վրա մի ալեկոծ ծովի մեջ», — ասում ենա Ֆրենին։

Աբովյանը վորոշեց Թիֆլիսից փախչել։ Գանգասավելով իր վիճակից, Աբովյանը մի նամակում Ֆրենին հարցնում է։ «Կարմղ երդյոք Պետերբուրգում մի անկյուն գտնվել

վորտեղ յեւ կարողանամ իմ հացը հայթայշթել: Ֆրենն ոգնության հասավէ Ազգային լուսավորության նախարարության առաջ նա հարց բարձրացրեց Ղազանի համալրարանում հայոց լեզվի և գրականության ամբիոն հիմնելու մասին: Նրա առաջարկն ընդունվեց: Ֆրենի առաջարկով ամբիոնի պրոֆեսորության թեկնածու առաջ քաշվեց Աբովյանը: Վեց ամսյա ժամկետ եր սահմանված գիտական շարադրություն ներկայացնելու ամբիոնի պրոֆեսորությունը ձեռք բերելու համար: Այդ մասին Աբովյանն ուշացումով իմացավ: Նա շատպեց ուղարկել իր յերկու պատրաստաշխատությունները: Մեկը «Ռուս տեսական և գործնական քերականություն հայերեն լեզվով», մյուսը՝ այբրենսարանն իր ընթերցարանով հայ պատանիների համար, Վերջինս հոչակավոր «Նախաշավիղն» և: Աբովյանը բոլորովին անհույս եր, վոր «նման աշխատանքները համապատասխան լինեն» ակադեմիայի պահանջներին:

Գրախոս նշանակվեց ակադեմիկոս Բրոսեն: Վերջինս Աբովյանի մեջ տեսնում ե այն մարդուն, վոր առաքելություն և վերցրել լուսավորել իր ազգը: Նոր լեզվի ժխտումը և հնի պահպանումը, — մեջ ե բերում Աբովյանի միտքը Բրոսեն, — պատճառ ե դառնում թանձրացած տղիտության, վորի մեջ խորաթուզված ե

ժողովուրդը և, նույնիսկ, ինքը հոգեվորականությունը: Բրոսեն խոստովանում ե, վոր ինքն այնքան ել համակիր չե հայ ժողովը գական լեզվին, բայց «յերբեք մտքովս չեմ անցրել — գրում ենա, — վոր յես շուտով ստիպված պիտի լինիմ փոխել կարծիքո... և այդ մեր հեղինակի շնորհիվ, վոր ներշնչեց ինձ դրա գաղափարը»:

Զնայած դրան, Աբովյանի հայացքների խոր դիմոկրատիզմը նրան յերկընտրանքի մեջ եր գցել: Բրոսենին գուր չեն յեկել Աբովյանի կրքոտ հարձակումները յեկեղեցական լուսավորության և ընդհանրապես հոգեվորականության դեմ, ինչպես և նրա այն հանդուզն հայտարարությունը, թե գրաբարը Հայկից ոկսած ժողովրդի համար մեռած լեզու յե յեղել, թե նա անզուտ ե և, մինչև իսկ, մնասակար: «Նրա այդպիսի պնդումները, — ասում ե Բրոսեն, — իսպառ թույլ չեն տալիս կարծելու, վոր նա ի վիճակի պետք ե լինի պատվով կատարելու իր պարտականությունները»:

Աբովյանը, վորն անհամբեր սպասում եր պատասխանի, 1841-ի սկզբներին հետ ստացավ իր ձեռուագիրը: Դա մերժման նշան եր:

* *

Պաշտոնական մտայնությանը գերի մնացած մտավորականությունից հիանթափած՝

Արովյանը փորձում եւ ավելի մերձենալ ժուղովրդին, մտնել նրա խորքը, ճանաչել նրա հոգեբանությունը։ Աշակերտները պատմում են, վոր նա առանձին սեր ուներ դեպի ժուղովրդական տօները։ Դա նրա համար անհոգ զվարժանքի աղբյուր չեր։ Նա ուզում եր ժուղովրդի մեջ լինել, շփվել, լսել նրա զրույցը, դիտել վարք ու բարքը, իմանալ ինչն եւ հուզում, վոգեվորում այս հասարակ ու պարզ մարդկանց։ Այս, Դորպատում ուսած, յելուապականացած Արովյանը չեր խորշում ժողովրդից, ինչպես շատ մտավորականներ, այլ, ընդհակառակը, վորտեղ ջիրիդ եր լինում, մուշտակովի կամ զեյնոբա, շտապում եր այնտեղ։ Մեծ հետաքրքրություն ուներ դեպի ուխտագնացությունները։ Մի անգամ կնոջ և մի խումբ աշակերտների հետ նա մասնակցում եւ սուրբ Գեվորգի տոնախմբությանը։ Զվարժասեր ուխտավորները, զիշերով, բաց յերկնքի տակ, խարույկ եյին վառում, առում, խոսում, ծիծաղում կամ կրակի շուրջը նստած աշուղների նվազին ու խաղին եյին ականջ գնում։ Մի խոսքով՝ ամեն կողմ զուռնա, յերգ, պար։ Միայն Արովյանը խրախճանքը թողած, շրջում եր ուխտավորների մեջ, խոսում նրանց հետ, կամ լուռ լուսմ նրանց խոռքն ու զըսւյցը։ «Շատ անգամ, — պատմում եւ Արովյանը «Վերքի» առաջաբանում, — վար

դոնաղ եյի գնում, յա քաղաքովն անց կենում, ուշ ու միտք հավաքում եյի՝ թե տեսնիմ խալիս խոսալիս, քեֆ անելիս, ի՞նչ բանից ա ավելի հագանում։ Շատ անգամ տեսնում եյի, վոր մեյլանում, փողոցում մեկ քոր աշղի ենպես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել՝ ականջ դնում, փող բաշխում նրան, վոր բերանների ջուրը գնում եր»։
Արովյանն ինքն ոկտում եւ հավաքել ժողովրդական խոռքն ու զըսւյցը, առակներ մշակել, գերմաններենից, Փրանսոներենից ու ուսերենից թարգմանել, փոխադրել, բայց այնպես, «վոր խալիսի սրտով ըլի»։ Ժողովրդական «ջանդյուկումների» նմանությամբ նա հյուսում ե իր բայաթիների շարքը։ Այս բոլորը նա հավաքում ե մի գրքի մեջ «Պարապահութիւնի խաղալիք» ընդհանուր վերնագրի տակ։ Արովյանի կյանքի այս շրջանը հարուստ է հազար ու մի հզացումներով։ Բացի փոլկուրային նյութեր հավաքելուց, նա փորձում է աշխարհիկ նյութի հիման վրա ժողովրդական լեզվով մշակել գրեթե գրական բոլոր ժանրերը. վեպ, պատմվածք, դրամա, առակ, յերգիծական պոեմ, բանաստեղծություն, քառյակ, մանկական վոտանավոր, թարգմանություն, ակնարկ հողված և, վերջապես, եղիստուլյար գրականություն։ Այս շրջանում նա զըսւմ ե «Թուրքի աղջիկ», «Առաջին սերը»,

«Ովսանա» պատմվածքները, «Հաղարփեշան» յերգիծական պոեմը: Գրում և շատ ուրիշ գործեր ել, բայց ամենանշանակալիցը, վոր նա ստեղծեց այդ տարիներին, հոչակավոր «Վերք Հայաստանի» վեպն եր:

Աբովյանը գիտեր, վոր իր արածը դիմագրության և հանդիպելու: Նա «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանում գուշակում և իր գրքերի գլուխն գալիք փորձանքը. «Վախենում եյի, թէ ժամանակս, փողս, կորչի, գրքերս ել մեկտեղ թողումը վեր ընկած մնա, փթի»: Բայց նա հույսերը չի կորցնում: Բարեկամներն ու ծանոթները խորհուրդ են տալիս գրքերը տակել տալ: Պահպանողական միտքը ծառս եկանդնելու իր գրքերի դեմ,— այսպես եր համոզված նա: Գրքերից մեկին նա մի այսպիսի խրատ և կցում:

Գնա, իմ խեղճ գի՞րք՝ գնա մարդամեջ,
Գլուխո քաշ զցիր, մի նեղանար հեչ:
Ականդդ փակիր, սիրտդ լմն բռնիր,
Ինչ առեն, խոռին, տար ու համբերիր:

Ամեն մի խոսքին ականջ զնողը
Գլուխը կլորցնի, յա ելած զուղը:
Ով լայաղ չանի քեզ վերցնի, կարթա,
Թող իր շնորքը պահի, մոտ չը գա:

Աբովյանն անհույս չեր: Այս խրատի մեջ

նա շատ պարզ ասում է, վոր կա ժամանակ, յերբ մարդիկ կիմանան, կհասկանան իր գըրքիրի արժեքը, կան ուրիշ մարդիկ, և իր որինակով կըրեն, կմշակեն, «զընա լավը կշենեն»: Աբովյանին հավատ եր ներշնչում ժողովուրդը: «Թէ դիտուն, խելոք մարդիք ինձ պախարակին, զու ել ա ինձ պահիք՝ սիրելի տղի, չունքի իմ ուղածս են ա, վոր քեզ ծառայիմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բիրնումս ա»,—դիմում և նա ժողովրդին:

Գոտեանդված, ուժ առած ազնիվ բարեկամների խոսքից, քաջալերանքից, ժողովրդի համար բարին ու գեղեցիկն անելու բարձր գիտակցությունից, Աբովյանն անքուն գիշերներ եր լուսացըել սեղանի մոտ, գրքերի ու թղթերի մեջ թաղված: Վողելորության այդ նվիրական պահերին նա թղթին եր հանձնում իր մտքերը, հույզերը, այլպիսով. հիմք դնելով հայ նոր գրականության:

*
* *

«Վերք Հայաստանի»,—ահա այստեղ և իսկական Աբովյանը: Դա նրա կյանքի կոթողն է, վասնակի փառքը: «Վերքը» յեղավ այն յերջանիկ զերքը, վորով բացվում և հայ նոր գրականության տարեկըրությունը:

Ի՞նչը ստիլեց Աբովյանին զրելու «Վերքը»:
Աբովյանն առաջինը դիտեց, վոր հայերինը

մոռացվում եւ ժողովուրդը մտքերն արտա-
հայտում եւ թուրքերեն, մտավորականությու-
նը ոռուերեն: Մի ներքին վողբերգություն
ապրեց: Դա միայն մանկավարժի, աշակեր-
տին սիրող ուսուցչի հոգեկան ալեկոծումը
չէր, այլ և հանգուզն քաղաքացու, վորի հո-
գում գլուխ եր բարձրացրել վիրավորված աղ-
պային արժանապատվությունը: Շատ մոայլ
եր պատկերանում ապագան Աբովյանին: Լեզ-
վի հարցը, զրաբմար, թե աշխարհաբար, նրա
համար մի սովորական հարց չէր: Այդ հարցի
անհապազ լուծումը մի ժողովրդի ազգային
ինքնապիտակցության գալու անդրանիկ, բայց
հուժկու պահանջն եր: Աբովյանը տեսնում
եր, վոր այլեւ վոչ մեկը հայերեն գիրք չի
տոնում ձեռքը, հայերեն խոսողներն ել շատ
հազվագել են: Աբովյանը նկատել եր, վոր
վառվուն պատահիները հորանջում, քնում
են հայերեն գրքերի վրա: Հայերեն գրքերը,
մեծ մասամբ, ժամապրքեր եյին և, անպայ-
ման, զրաբարալեզու: Յեփ, ընդհակառակը,
այդ նույն աշակերտները հափշտակված կար-
դում եյին ոռուերեն, գերմաներեն և ֆրան-
սերեն լեզվով ձեռքերն ընկած զրքերը: Փո-
խանակ վառելու, բորբոքելու յերեխայի յե-
րեկակայությունը՝ հայերեն զրքերն սպա-
նում, մեուցնում եյին ամեն հետաքրքրու-
թյուն և աշխանույթ: Պատճառը զրաբարն եր:

«Մեկ ազգի պահողն ել լեզուն առ հավատը,
թե սրանց ել կորցնենք, վայն եկել ա մեր
որին», — ասում ե Աբովյանը «Վերքի» մեջ:
Լուծել լեզվի հարցը, այսինքն քաղաքացիու-
թյուն տալ ժողովրդական լեզվին, վորը հառ-
կանալի յեր «հարիր հաղարին», հարազատ ու
մոտ բոլորին, նշանակում եր կամուրջ գցել
զրականության և իրականության միջն, գի-
րը, զրավոր խոռքը հանել վանքի խցերից,
տանել կյանք, մտցնել ժողովրդի մեջ, դարձ-
նել նրա սիփականությունը: Վերջապես, այդ
նշանակում ե՝ ժողովրդին ազգային միողջու-
թյան բերելու գաղափարն ապահովել:

Բայց գա հարցի միայն տեսական կողմն
եր: Լուծումը պահանջում եր զործ: Առաջին
խիզախը յեղավ նա, ով այնքան կրքոտ աս-
պարել եր քաշել այրող հարցը: Այսինքն՝
ինքը, Աբովյանը: Բարիկենդանի տոներին,
աշակերտներին արձակելով, Աբովյանը քչփո-
բում ե իր հիշողությունը, այն բոլորը, ինչ
տեսել, լսել ու ապրել եր յերեխա ժամանակ
Քանաքեռում: Աբովյանի միտքը կանգ և առ-
նում մի խոշոր պատմական անցքի վրա, փո-
րին ինքը ժամանակակից ու ականատես եր
յեղել պատահի հասակում: Ահա այդ նյութի
վրա նա վորոշում ե կառուցել իր առաջին
վեպը:

«Վերքի» նյութն այն հետաքրքրական

պատմաշըջանն է, յերբ չայստանը դառնաւ-
գին հեծեծում եր պարակական լծի տակ:

Վիպագրողը բացում է ճնշված ժողովրդի
վերքը, նրա վողբերգությունը: «Փամանակը
ենակես եր ծովել, վոր մարդ իր գլուխը չեր
կարում պահի», — ասում է Արովյանի գյու-
ղացին: Հայ գյուղացին դժոն եր: «Վերքը»
նրա արտունջքի փիլիսոփայությունն է:
Գյուղացին իր գատածի տերը չե: «Վահ առւնն
եր իրանը, վահ մալը, վահ ապրանքը, վահ ջա-
նը, վահ ողլուշազը»: Գյուղացուց խլել են ա-
մեն ինչ: Խլել են վահ միայն ինչքը, այլև
պատիվը: Սարդարի չնչին պաշտոնյաների
կընկի տակ տրորվում է հայի մարդկային
կոչումն ու արժանապատվությունը:

Վահ են ապին՝ վոր աշխարքումս
անտեր ա,
Վահ են յերկրին՝ վոր թշնամու
գերի ա,
Վահ են խալխին՝ վոր ինքն իր
կյանքն, աշխարքը
Զի պահպանիլ, ու հարամու
ձեռ կը տա:

Բայց թշվասությունն ել ափ ու սահման է
ձանաչում: Վիշտ ու տառապանք, ամեն անար-
գանք տեսած ժողովուրդն ել իր հերոսականն

ունի: Համբերությունը հատած ժողովրդի
տրտունջքն ել կարող ե ծնել հանդուգն, խի-
ղախ մարդիկ, վոր ախոյան կանգնած հեզ
ժողովրդին, կովեն, արյուն թափեն նրա հա-
մար: Դա ժողովրդի ազատատենչ վոգին է,
վոր այսոր Աղասու, վաղը Հովակիմի, մյուս
որը մի այլ անուն ու կերպարանք առած,
զենքը ձեռին բարձրացնում է գլուխը: Աղա-
տասիրությունն ամեն մի ժողովրդի անկապ-
տելի իրավունքն է: Աղասին արյուն և թա-
փում այդ իրավունքը ձեռք բերելու համար:
Նա իր գլուխը դնում է մահու տակ:

Այն քաղաքական մտայնությունը, վորի
վրա հեղինակը կառուցել ե իր վեպը, արտա-
փայլում է Արովյանի հպոխայի գլխավոր
կիրքը, ազգային ազատագրական շարժումը:
Աղասու ըմբռատացումը պարակական աիրա-
պետության դեմ ազգային աղատագրական
կովի առաջին գոտեմարտն է:

Մուս զորքի հաղթությամբ Հայաստանը
վորք և գնում կյանքի մի նոր շրջան: Մուս
պետականությունը վեպի մեջ հանդիս է գա-
լիս իրրե Հայաստանի փրկիչը:

Արովյանի քաղաքական մտայնությունն
այն ժամանակ, իհարկե, չեր թափանցում
ուստ պետականության աշխարհակալա-
կան ձգտումների մեջ: Նա իր առաջ հարց
չեր դնում, թե ինչու յի «Ռուսաստանը

Ա. Ե. Բ. Բ.

ՀՐԱՄԱՆ

ՊՊ. Բ. ՀՐԱՄԱՆ

ՊԼԱՄԱԿԱՆ Վ. Ա. Պ.

Հ. Ռ. Դ. Ա. Բ.

Ի. Ա. Ջ. Ա. Բ.

Թ. Ի. Ժ. Խ. Օ.

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Ե. Բ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Բ.
ԸՆԴԱԿԱՆ Ա. Ե. Բ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Բ.

1855

ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. Ե. Բ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Բ.

տիրում կովկասի լեռներին»: Աբովյանի սու-
սական որիենտացիան, սակայն, իր շատ վո-
րոշ պատմական հեռատեսությունն ուներ:

Այս, նա պատմական խորաթափանցու-
թյամբ եր նայում քաղաքական հարցերին:
Նա շատ լավ գիտեր, վոր մի լուսավորված
ազգի, որինակ ֆրանսիացիների համար, Ռու-
սաստանի ձեռքի տակ անցնելը այն նշանա-
կությունը չեր ունենա, ինչ հայերի համար:

Հայաստանը քայքայված և ուժասպառ յե-
ղած յերկիր եր: Նրան պետք եր մի ուժեղ
կովան: Վարդն եր լինելու այդ կովանը, Պարս-
կաստանը, թե Ռուսաստանը: Պարսկական
տիրապետությունն իր ասիստական ահավոր հե-
տամնացությամբ վտանգել եր Հայաստանի
ազգային ինքնությունը: Աբովյանն ինքն ել
գիտեր, վոր մի ժողովուրդ, յեթե գժիքախտու-
թյուն ե ունեցել իր յերկիրն ու ինքնուրույ-
նությունը կորցնելու, այլև ի վիճակի չի
լինելու պահպանելու իր ազգային ինքնու-
րույնությունը, լիզուն, հոգեոր գանձերը:
Աբովյանը մի տեղ ասում ե, վոր ամեն ինչ
խորտակող, ուժեղ հեղաշրջումների հորձանքի
մեջ հայերի համար դժվար ե պաշտպան կանգ-
նել իրենց ինքնուրույնությանը: Բայց Ռու-
սաստանի մեջ նա տեսնում եր այն հզոր պե-
տությունը, վորի թերերի տակ հայ ժողովուր-
դը մի պահ կարող ե ուշքի գալ, շունչ քա-

շել, հավաքել իրեն։ Ծուսաստանի կողմն անցնել՝ նշանակում ե փրկել ազգը կորստից—ահա առաջին պայմանը։ Իոկ յերկրորդը՝ ժողովրդի բախտը կապել մի ժողովրդի հետ, վորի լեզուն, գրականությունը, կուլտուրան արդեն ոկսել ելին աշխարհի հիացմունքի առարկան գառնալ։ Այդ ե պատճառը, վոր Աբովյանը շատ մեծ նշանակություն եր տալիս սուսաց լեզվին։ Դա կողնի,—ասում եր նա, — կրթելու մեր միտքն ու զգացմունքը ուսու գրականության ստեղծագործությունների վրա, վերջապես, մոտենալ այդ ժողովը ըստ գոգուն։ Ծուսաց լեզուն սովորելով, — ասում ե նա մի ուրիշ տեղ, — մենք կարող ենք միանալ ուսու մեծ ազգի հետ, վորի միայն անունը ներշնչում ե ամենքին, մինչև իսկ սուսարին, սեր և անձնվերություն։

Ազգության գաղափարը վեպի քաղաքական մտայնության առանցքն է։ Ժողովուրդը պետք ե գա, համնի ազգային ինքնաճանաչության։ Դրա համար պետք ե այնպես անել վոր ժողովուրդը կարենա ինքն իրեն ճանաչել, «մեր ազգը, վոր խեղճ ա մնացել, թրի, կրակի յեսիր, բոլորի պատճանն են ա, վոր մեզ առող չի ըլում, թե մենք ով ենք, մեր հաշվատն ինչ ա, ինչի համար ենք յեկել աշխարք, քոռ զալիս ենք, քոռ գնում»։ Այսեղ գյուղացու բերանով խոսում ե ինքն Աբո-

վյանը։ Դուրս հանել ժողովրդին հոգեկան և մտավոր խավարից, վորի մեջ ընկղմված նա խարխափում է։ Ժողովուրդը պետք ե կանգնի ազգային միողջության ճամբի վրա, դառնա ազգ, համահավաք ժողովուրդ, ունենա իր պետքային հոգեբանությունը, ազգային հպարտանքը։ Դրա համար նա պետք ե լավ իմաստ, իր պատմությունը, լավ ու խոր ըմբռնի, հասկանա այն դարերի ճամբան, վորի վրայով ինքը, այդ հինավուրց ժողովուրդը սահել, անցել ե իրը կոխված, վիրավոր ու դառնացած, ցիրուցան յեղած ու անկազմակերպ ժողովուրդ։ Իր «Վերքով» Աբովյանը հայի ձեռն ե տալիս նրա շատ մոտ անցյալի պատմությունը, վոր նա իմանա յեղածը, տեսնի «հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմիթար պատկերները»։

Բայց «Վերքի» քաղաքական մտայնությունն այս կետի վրա չի հանդչում։ Աբովյանն այն մտքին է, վոր այդ բոլորը վիրշին հաշվով ծառայելու յեն մի գաղափարի, վորը գարեր անընդհատ կաղմել ե ինչպիս ուրիշ մնշված ժողովուրդների, այնպես ել հայ ժողովրդի յերազանքը։ Վորն ե այդ. ունենալ ազատ և քաղաքականապես անկախ հայրենիք։ Դրա համար չպետք ե ձեռքը ծոցը գրած կանգնել։ Յեթի հարկագոր լինի՝ պետք ե կովի դուրս գալ, արյուն թափել։ Բայց այս գա-

դափարը նա իր վեպի մեջ բացահայտ ձեռվ
չի գրել, այլ ասելու ու անցել ե մի հեռավոր
ոկնարկի ձեռվ, վոր հասկացողը հասկանա:

Ազգային ազատագրական շարժումը մեր
իրականության մեջ մկրտվեց լուսավորչա-
կան շարժման գաղափարական ավագանում:
Սբովյանի յերկերում յեղած մութ ակնարկ-
ները՝ «արյուն թափելով» անկախ, ազատ
հայրենիք ունենալու մասին, վկայում են
այն նոր շրջափուլը, վոր 40-ական թվական-
ներից վոտք դրեց հայ ազգային ազատագրա-
կան շարժումը: Ռուսական ցարիքմի ոգնու-
թյամբ կոփվ մղելով պարսից տերության
դեմ, հայ ժողովուրդն այժմ պետք ե յեներ
«ռուսական հղոր արծվի» դեմ՝ պաշտպանելու
իր ազգային իրավունքը:

Անժամանակ մահը խանգարեց Արովյանի
քաղաքական մտայնության վճիտանալուն:
Յեվ շատ բան, վոր Արովյանի ժամանակ
դեռ պարզ ու ըմբռնելի չեր, հասկանալի յե-
ղավ հետո, հայ վաթսունականների ժամանակ:
Արովյանն իր ծոցում, զրեթե զաղտագողի
կրեց հայ ժողովրդի ազատության դրոշը, իսկ
հաջորդ սերունդը Նալբանդյանի ձեռով թա-
գուն պահված դրոշը հրապարակ քաշեց:

Արովյանը «Վերքը» գրել ու պատրաստել
եր դեռ 1840-ին: Հեղինակն իր վեպը չտեսավ
տպագրված: «Ո՞վ գիտի, բարքի թե մի առտ-

վածառեր մարդ իր հոգու խաթիլ տպիլ տա»,—
հույս ե հայտնում նա մի տեղ: Այդպես ել
յեղավ: Արովյանի մահից հետո, 50-ական
թվականներին «Վերքը» արտագրված ձեռ-
քից ձեռք անցավ: «Վերքի» առաջին տարա-
ծողները յեղան նրա աշակերտները, վորոնց
մոտ, դեռ 1838-ին մի քանի հատվածներ
կարդացել եր:

«Վերքը» ձեռքից ձեռք անցնելով ընկավ
Դորպատ: Արովյանը մի տեսակ ճանապարհ
եր բացել դեպի Դորպատ, վոր 50-ական թվա-
կանների սկզբներին հայ գրողների ու գոր-
ծիչների գաղափարական մկրտության ավա-
զանն եր գարձել: Դոգոլսյանը, Պատկանյանը
և շատ ուրիշներ գիշերներ են լուսացրել
«Վերքի» արտագրված որինակի վրա, իրենց
արցունքով թրջել ձեռագրի եջերը: Ներշնչ-
ված հայ գորպատականները հայրենասիրա-
կան յերգեր ու բանաստեղծություններ եյին
գրում: Մեկն այդ անհաշիվ ներշնչումներից
յեղավ համբաւագոր «Մայր Առաքուին»:

Վերջապես, 1858-ին, Փոնդոյանի ջանքի-
րով, Թիֆլիսում լույս տեսավ «Վերք Հայու-
տանին»: Վեպը մեծ հաջողություն ունեցավ:
Պերճ Պոռշյանը պատմում ե այն տպագորու-
թյունը, վոր գործել ե իր վրա Արովյանի վե-
պը: Այնքան ե կլանվել Պոռշյանը, վոր նույն
պիշերը մի անգամ կարդալուց հետո, յերկ-

ըորդ անգամ և սկսել: «Վերքի» ազգեցության
տակ նա սկսում է գրել իր անդրանիկ վեպը՝
«Սոս և Վարդիթերը»: Միայն Պոռշյանին չի
վոգելորել «Վերքը»: Վեպը մեծ աղդեցու-
թյուն և ունեցել նաև Ղազարոս Աղայանի
վրա: Բարձր գնահատության և արժանացել
«Վերքը» հյուսիսափայլականներին՝ Ստ. Նա-
զարյանի, Միք. Նալբանդյանի, արևմտահայ
հրապարակախոռ Ստեփան Վոսկանի և ուրիշ-
ների կողմից: Ավելի ուշ, 90-ական և 900-ա-
կան թվականներին «Վերքի» մասին շատ
ջերմ ու դրական արտահայտվել են Ստ. Շա-
հումյանը և Հովհաննես Թումանյանը:

Ի՞նչն եր, վոր այգակես հմայում եր վեպի
ընթերցողներին: Ամենից առաջ, իհարկե,
այն, վոր դա մեր առաջին աղջային վեպն
եր, Լավ և առել Նալբանդյանը, թե «այդ աշ-
խատության մեջ մարմին և առել ազգի հո-
գին, ազգի ներկա վիճակը, ազգի հանկացո-
ղությունը»: Հայկական գյուղը պարսիկ տե-
րության ձեռին, ուռուպարսկական պատե-
րազմը, ուռուց զորքերի մուտքը Յերեան,—
ահա այն պատմական դեպքերը, վոր իրենց
ճշմարիտ պատկերացումն են դուել վեպի մեջ:

Կառուցված լինելով ազգային աղատագրու-
թյան գաղափարի վրա՝ վեպը ումանտիկա-
կան վոգի ունի: Մարդուն բարձրացնող,
միաբն ու հոգին աղնվացնող ումանտիզմն

և այդ, վոր համակռւմ և ընթերցողին և
մինչև վերջը գերի պահում իր կախարդանքի
մեջ: Բայց դա վեպի շունչն ե, վողին: Վեպի
մեջ ունալիստական պատկերացումների կարե-
լի յե հանդիպել մինչև անգամ՝ նատուրա-
լիստական նկարագրերի: Սանտիմենտալիզմ—
նույնպես կարելի յե գտնել: Բայց այդ բոլոր
անհարիրը միավորվում և յերկի հիմնական
վոճի, ուռմանտիզմի, շիլլերյան աղնիվ, բարձր
ուռմանտիզմի շուրջը: Բայց այդ չի խանգա-
րել, վոր Աբովյանը հարազատ մնա իրակա-
նությանը, վերապատկերի մի ամբողջ աշ-
խարհ՝ վորին վիպագրի բանաստեղծական կո-
րով հավիտենական շունչ և տվել: Աբովյանի
ունալիզմն անխառն չե, բայց առաջ ե, թեև, հի-
պերբոլիկ ե, բայց կենդանի, ինչպես ժողո-
վըրդի զբուցը, խոռքը: Աբովյանը, որինակ,
այնպես և պատկերագրում ծխամած խրճիթը,
վոր ընթերցողին մի պահ թվում ե, թե ինքը
ծխի հոտ և առնում: Զմռան տեսարանը կար-
գալիս մարդ ակամա ցուրտ և սարսուռ և
զգում: Դեմքերը զծելիս ել Աբովյանը շատ
հաճախ ունալիստական հնարների յե գիմում:
Տեր-Մարկոսը, զգիր Կոստանը, Մուռոն, տա-
նուտերը,—այս բոլորը կենդանի մարդիկ են:
Մի փոքր այլ և Աղասին: Դա հերոսական
դեմք ե, և, բնականաբար, նրա նկարագիրը
ունալիստական չե սովորական հառկացողու-

թյամբ։ Աղասին քաջ ե, առառաջելական ուժի տեր, բայց զարմանալի աղնիվ ու բարի Գեղցիցիկ ե, խելոք, ամեն բանի մեջ շնորհալի և ընդունակ, մարդասեր։ Մի խոսքով Արովյանն իր հերոսին ներկայացրել ե բոլոր բարեմանություններով։ Աղասին դյուցազնական կերպար ե։ Նա մի կողմով հանդիսանում ե ժողովրդի ազնիվ ու լավ գծերի խտացումը, մյուս կողմով՝ շիլերյան հերոսների որինակով։ Արովյանի գաղափարների ձայնափողը։ Այդ Աղասու պատկերի կուռ ամբողջությունը յերկփեղել ե։ Գեղջկական պարզամտությունը չի խանգարում, վոր նա լյուտերականության գիրքերից քննի յեկեղեցին, ծաղրի նրա ծիսակատարությունները։ Իր մենախոսությունների մեջ Աղասին պահանջել է հողի վրա մերժում և միջնադարյան ասկետիզմը, հանդերձյալ աշխարհին հակադրելով յերկրային կյանքի հրապույրը, վայելքը։ Նույն մտքերն Արովյանն արտահայտել ե նաև «Թուրքի աղջիկ» սրտառուչ պատմըվածքի մեջ։

«Կերքը» հիմնապես կառուցված լինելով ոռւս պարսկական պատերազմի ֆոնի վրա, ունի շատ վորոշ ոյուժետային գիծ։ Մի ուրիշ հեղինակ հարազատ կմնար դրան, բայց Արովյանը փշրում ե վեպի այդ սահմանները և իր հախուսն ընթացքի մեջ ե առնում ճամ-

բին պատահածը։ Վեպը հեղեղված և խոհական և լիրիքական զեղումներով։ Վեպի հիմնական շաղախը հույզն ե, հուզականությունը։ Լինում են պահեր, յերք թվում ե, թի հեղինակի զգացմունքների հեղեղի մեջ կորչում և ոյուժեն, վիպական գործողությունը։ Ինքն Արովյանն ել ե գիտակցում այլ «Հավ չի սկսած բանը թողար ու հսկես քարոզ ասիլ, յես ել գիտեմ, ամա սիրառ չի զիմանում, ինչ անեմ», և խոստովանում ե հեղինակը վեպի կիսին։ Արովյանն ասել ե, ինչ վոր մըտքով անցել ե, ինչ վոր սիրառ զգացել ե։ Մի գուցե գրանից յերկի վիպական կառուցվածքը մի փոքր տուժել ե, բայց դրա վոխարեն նաև «Վերքի» մեջ դրել ե իր ժամանակի միտքն «Վերքի» մեջ գրել ե իր ժամանակի միտքն «Վերքը» հայ ժողովուրդն ե, վոր Արովյանի բերանով գարերին ու սերունդներին խոսում ե, պատմում իր արտունչքը, մտածումներն ու իմաստությունը։

* *

Մյուս մեծ և նշանավոր գործը, վոր ստեղծել ե Արովյանը, որ «Նախաշավիղն» ե։ Ժամանակակից պարագության կազմեց «Վերք Հայաստանին» դարագության կազմեց «Վերք Հայաստանին» մեջ, իսկ «Նախաշավիղը» մի կատարյալ հեղաշրջում առաջ բերեց հայ մանկավարժական մտքի պատմության մեջ։ Յերկու գործերի գաղափարական շաղախը գե-

Մոկլամաիպմն և ԽԵ մեկը, թե մյուսն ախո-
յան կանգնեցին կղերական միջնադարյան
մտայնության դեմ, առաջ քաշելով աշխար-
հիկ սկզբունքների պաշտպանությունը գրա-
կանության և մանկավարժության մեջ։ «Նա-
խաշավիղը» հիմն ի վեր շարժեց մանկավար-
ժական գողմատիկ միտքը։ Բացի նրանից,
վոր «Նախաշավիղը» փոխարինելու յեր սալ-
մուին, կտակարանին, վորոնք անգիր անելու։
Համար հայ մանուկները գլուխ եյին ջարդում,
միաժամանակ դա յիվրոպական մանկավար-
ժության գաղափարների պաշտպանությունն
եր հայ իրականության մեջ։

«Նախաշավալվի» մեջ Աբովյանը հանդես կգալիս իրեն Խուսասոյի աշակերտու Նա պահանջում և ճանաչել մանկան հոգին, նրա միտքը չծանրաբեռնել ժամագրքի խրթին գրվածքներով, վորոնք, ինչպես Աբովյանն և առում, «միանգամայն ոտար և անօռվոր հեղեղակառ մանուկների սովորական լեզվին, հոգեկան կարողության և բնական հետաքրքրության»: Աբովյանը «Նախաշավալվով» պահանջում և մի անգամ ընդմիջու հրաժարվել «գրերի անունները տալու՝ այբ, բեն, զիմ գառափանգման միջնադարյան յեղանակից: Նա փոխարենն առաջ և քաշում հնչական մեթոդը, ա, ը, զ, այտինքն՝ տառերի բնական արտասանությունը: Յեկ, զօր գլխավորն ե,

«Ղերքից» հետո «Նախաշավիղը» գլանարկ
սրտի մեջ խրված ամենամեծ սուրբ յիղավ:
«Գրաբարի խրտնաբանությունը, — ասում ե
Աբովյանը, — պատճառ ե, զոր յերեխաներին
ուսումը սոսկալի պատիժ թվա, դպրոցը՝ տան-
ջարան»: Գրաբարը «Նախաշավիղի» մեջ Աբո-
վյանը փոխարինում է վահ թե արարատյան
բարբառով, ինչպես «Վերքի» մեջ, այլ մա-
քուր զբական լեզվով: «Վերքի» համեմատու-
թյամբ սա արդեն մի քայլ առաջ ե:
թյամբ սա արդեն մի քայլ առաջ ե:

թյամբ սա արդուս ոք քայլ ։ Սի փոքը այլ յեղավ այս յերկու գրքերի՝ «Վերքի» և «Նախաշավավիթ» ճակատագիրը՝ «Վերքը» գրվեց ու մնաց տպագրության կարուս; Հեղինակի աչքը բախս չունեցավ տեսնալու նրա հրատարակությունը: Այնինչ յերկու կար փորձություններից հետո Արովյանին հաջողվեց «Նախաշավիթը» տպագրել: Բայց այն, ինչ յեկավ այդ հրատարակության գլուխին, թերեւ ամենագագաթանն և հեղինակի ապրած ձախորդությունների մեջ:

Հանդիսադառնալ գրքի բախտի վրա: Աբովյանը
կորցրեց վոչ միայն իր լավագույն բարե-
կամներից մեկին, այլև «Նախաշավղի» իրա-
վունքն ու հրատարակությունը՝ մի բան, վոր
նրա համար ստեղծել եր ցարական գահի նը-
կատմամբ հանցավոր ճանաչված Հետան Միլ-
լիրը: Նույն տարին Աբովյանը «Նախաշա-
վղը» ուղարկում է Գիտությունների Ակա-
դեմիա: Այստեղ ևս անհաջողության ե հան-
դիպում գիրքը: Աբովյանը գիմում ե, վոր
գոնե տպագրվի իր գործը, բայց ազգային
լուսավորության նախարարությունը գան-
գատվելով իր նյութական հնարավորություն-
ների սղությունից, հրաժարվում է: 1841-ին
Աբովյանը «Նախաշավղը» ներկայացնում և
Անդրկովկասի գպրոցների վարչությանը՝ հա-
յոց գպրոցներում այն իրեն լեզվի ուսուցման
ձեռնարկ ընդունելու համար: «Նախաշավղի»
բախտը գտնվում էր Թիֆլիսի գիմազիոնի
մանկավարժական խորհրդի ձեռքին: Այս ան-
դամ ել անհաջողություն: Ձեռնարկը չի ճա-
նաչվում բավարար և ոգտակար: Մի շարք
դիտողությունների հետ ձեռագիրը վե-
րադարձնում են հեղինակին: Յերկու տարի
անց, թերությունները շտկած, Աբովյանը
կրկին «Նախաշավղը» ներկայացնում է քըն-
նության: 1843-ի գերջերին Թիֆլիսի գիմա-
զիոնի մանկավարժական խորհուրդը նորից

80

34
կլինի: Իս երեխայել լրեխայն դեռ փոքրէ
և տեսք ժամանակաւ կզրանայ և մեծ մարդ
կրառանայ: Կյանքն ևս առաջ երեխայեր ծերն
շատ բան գիտ: Երեխայն շատ բան չ'Է
գիտի: Իս շատ բան չգիտեմ: բայց ես լաւ
գիտեմ: որ բարի մարդին իստուած էլ կոիրէ
մարդ էլ:

35
Յէ լինարչն մեծ աև գեղեցիկ: Ո՞՛Նրան
միքան գեղեցիկ ստեղծեց ո՞վ այ երկրին
անձնել: Ո՞վ այ ժառոցն աերև և պտուշ: Զորը և բայլը:
Ըրմը և բայլը, լերմիրը և երկնքը ո՞վ այն
քան զարմանալի զարդարեց: Լն փոքր հաս-
կին ո՞վ ատլիս սերն և զըրուն: Ո՞ւստի
սահան ծաշիկը այնքան գեղեցիկ գյուն և
անշլ հոտս: Ո՞վ աև հյակապ աշխարքը
լուսաւորումն պահպանում: Դուռ ած իմ է
էս զարմանալի աշխարքը դու ստեղծեցիր և
աշխարքն է քոյ: Խնձ ևս դու ստեղծեցիր
և ես ևս քո որդի և արարած եմ: Որպէս
դու բարի ես և գթած նշնպէս և ես պար-
սիմ լինիւ բարի և գթած: որ քեզ նմանիմ օ

36
Երբ զարթնիմ: պետքէ փառք տամ
ք, որ նա ինձ այնպէս քաշցր քուն պար-

Մի եջ «Նախաշավղը»-ից:

քննության և առնում «Նախաշավիղը»։ Խորհուրդն այս անդամ ձեռնարկը գտնում է պիտանի և ոգտակար, սակայն պահպանողականությանը կառչած մարդիկ առաջարկում են ին փոխել գրքի վոգին։ Յերկրորդ քննությունից հետո՝ Արովյանն այլեւ չտանելով իր գլխին կարգված դատավորների քմահաճ վճիռները, պատահածը համարելով կյանքի մի դառն հեղնություն, փորձում է իր ծախքով գլուխ բերել «Նախաշավղի» հրատարակությունը։

Գիրքն սկսում է տպագրվել, բայց լույս աշխարհ չեկած՝ առիսական վայրագ հետամասցության գույն եղանում։ Վրաստանի թիմի տուածնորդ Կարտապետ լեպիսկոպոսը, լսելով, վոր «Նախաշավիղը» դրված և ուամկական, գոնենիկ ժողովրդական լեզվով, վորը, ինչպես Թիֆլիսի մանկավարժներն ենին ասում, քերականական վորեն վորոշ կանոն չունի, կարգադրում և տպագրությունը դադարեցնել, հավաքել թերթերը և, ասում են, այլել տալ։ Հոգեորականությունը, պահպանողական մանկավարժությունը, չինովիկական պաշտոնյությունը, մի խոսքով այն ժամանակվա պաշտոնական քարացած միտքը արգելքի տակ դրին մի գիրք, վոր շատ տարիներ հետո հեղինակի փառքերից մեկը կազմեց։

* *

1843-ին Արովյանը տեղափոխվեց Յերևան։ Դպրոցների վարչությունն այնքան ել հաշմաչքով չեր նայում նրան։ Յերևան տեղափոխվելու ել շատ վորոշ վործ եր նրան հետու պահելու այն մտավորական շրջաններից, վորոնց հետ շփում եր Թիֆլիսում։ Այն, այլև Արովյանը վստահություն չեր ներշնչում։ Բայց ճադույն իշխանությունն անկարող եր չնկատելուն տալ վոր նա յեղած կարգու կանոնից դժգոհ, ինչպես կյանքում, այնպես ել նամակներում, գանգատվում է մինիստրության վրա։ Մի նամակում Թրենին նա կասկած է հայտնում, վոր իր գրածները հայտնի յեն դարձել ամբողջ Թիֆլիսում։ Թիֆլիսում շատ լավ հայտնի յեր Արովյանի բարեկամությունը հետաք Միլիսի հետ Վերջապես, փոխարքային ներկայացված բնութագրի միջ Արովյանի մասին ասված եր, վոր նա «անկարող ե իրեն հանձնված դպրոցը բարձրացնել մինչև այն աստիճան, վոր նա որինակելի լինի Անդրկովկառյան յերկրում»։ Մի խոռքով Յերևան տեղափոխվելու աքսորի նման մի բան եր, Բայց Արովյանին միիթարում եր այն միտքը, վոր այժմ նա վայր ե դնելու պանդուխտի ճամբորդական ցուազը և գործելու յե իր հայրենիքում։

Յերևանը, հարկավ, այն չեր, ինչ թիֆլիսը: Դա մի խեղճ, փոքրիկ քաղաք եր, գավառական սովորական ճահճն: Արովյանն ընկել եր մի գորշ և անբովանդակ աշխարհ: Յերևանի բարձր խավը, այսինքն՝ չինովուկական պաշտոնելությունը—դասավորները, վոստիկանական աշխատողները, մտավորականությունը, ուսուցիչները, բժիշկները գոհ իրենց անձնական կյանքից, հեռու հասարակական բարձր շահագրգոռություններից, իրենց համար մի տաքուկ միջավայր եյին ստեղծել: Թղթախաղը սիրելի զբաղմունք եր, հարբեցողությունը — սովորական յերկույթ, իսկ բամբասանքն ու ինտրիգը՝ միակ բաները, վոր կենդանության եյին կոչում մեռած աշխարհը:

Այս շրջապատի հետ Արովյանը հաշտվել է կարող: Նա ստար, խորթ մարդ եր: Ծանոթանալով Յերևանի դպրոցին՝ Արովյանի առաջին հոգած յեղավ ուսումնական հաստատությունն աղատել անպատճառ, կրթական գործին միայն վնաս բերող ուսուցիչներից: Յիշ դա, Արովյանի համար միանգամայն աննկատելի ձեռվ, դժության անդրանիկ համտիկը յեղավ, վոր ընկավ ուսուցչական հին կազմի և նոր կարդված տեսչի միջև: Արովյանը յերազում եր իր ձեռքի տակ ունենալ այնպիսի ուսուցիչներ, վոր գեթ մանկավար-

ժական մարրական պատրաստությունն ունենային, և, բայց այդ, սրտանց գործեյին: Նա դպրոցական վարչության ուղղած իր զեկուցագործի մեջ աշխատում եր համոզել, վոր անփորձ, անպատճառ ուսուցիչն աշակերտին հարկադրում և ամեն բան սովորել անգիր, մեքենայորեն, վոր նա չի աղոտում աշակերտի մտքի վրա... Բայց ով եր Արովյանին լսողը, ով եր նրա ասածներին ուշագրություն դարձնողը: Նրան չհաջողվեց ուսուցիչներից վորեն մեկին փոխարինել մի ուրիշ և նոր մարդով: Բոլոր ուսուցիչներն ել մնացին իրենց պաշտոնում: Յեր Արովյանը, ուզերչողեր, պետք և գլուխը կախ շարունակեր նրանց հետ աշխատել: Այդպիս եր բարձրագույն իշխանության կամքը: Արովյանը շատ լավ նկատում եր, վոր այդ բոլորն իր պաշտոնակիցների մեջ առաջ և բերում «միայն գժգոհություններ և խովություններ»: Նա այժմ պետք և լուր դիմադրիր այն ցած բանս ապրկություններին, վոր գժգոհ ուսուցիչները կազմակերպում եյին իր դեմ:

Նա լեզու չգտավ և տեղական իշխանության հետ: Բավացեկին, վոր Յերևանի նահանգապետն եր, մինչև վերջը գժտված մնաց նրա հետ: Միքիր քշիկու յերկյուղը, աքոռական լինելու սարսափելի հեռապատկերը հարկադրում եր նրան, ինչպիս ինքն և ա-

նում, լոռիթյամբ չափավորել զգացմունքը՝
Բայց այդ նրան հեշտ չեր հաջողվում: Հոգով
և մտքով ազնիվ, ընությամբ տաքարյուն,
անմիջական Աբովյանը շատ հաճախ կորցնում
էր զգուշությունը, չափավոր լինելու տակար,
յերբեմն, նույնիսկ, հոգեկան հավատարկը շուրջունը:

Սյա, միշտ չեր հաջողվում նրան անտար-
բեր ձեանալ, խուլ ու համբ մնալ շրջապատի
նկատմամբ: Յեկ նրա հոգին մի ազնիվ ցա-
սումով յելնում եր, ընդվում շուրջը յեղած
տգիտության դեմ: Քաղաքի գինեաներից նա
զոռով զպրոց եր քարշ տալիս տշակերտնե-
րին, փողոցում յերեանցիներին բարձրածայն
հանդիմանում եր, վոր իրենց յերեխաներին
դպրոց չեն ուղարկում: Իսկ մի անգամ ստիպ-
ված յեղավ նույնիսկ փայտ բարձրացնել ա-
շակերտներից մեկի տղեա ծնողի վրա, վորը
խոնարհ բարե եր տվել փողոցով անցնող վոս-
տիկանին և միանդամայն անտարբեր մնացել
եր նկատմամբ: Դա մի նյարդային, ջղածգա-
կան քայլ եր, վորով Աբովյանի ազնիվ ու
անմիջական հոգին մատնում եր իր անհաշ-
տությունը, գժոտությունն այդ տգետ, սահ-
մանափակ շրջապատի հետ, վորի մեջ մի
աննշան, չնչին առտիմանավոր, բայց վոստի-
կան շատ ավելի յեր պատկառանք ծնում,

քան, ասենք, մի Աբովյան, վոր ուսուցիչ եր,
մատաղ ոերնդի գաստիարակ:

Աբովյանը փորձեց միխիթարություն գտնել
զպրոցական գործի մեջ: Մանուկների աշ-
խարհը նրա տարերքն եր: Նա իր վողջ յե-
սանդը գործ վրեց իր խնամքին հանձնված
ուսումնարանն որինակելի գարձնելու համար:
Յեկողական մանկավարժության առաջավոր
սկզբունքների վրա դաստիարակված Աբո-
վյանի միտքը ճախրում եր հեռուները, գծում
կրթական գործի այնպիսի բարենորոգչական
ծրագրեր, վորոնց նախանձել կարող եյին հայ
մանկավարժները նաև հետո, նույնիսկ մի
քանի տանամյակ անց: Այն ժամանակ, յերբ
շարունակում եր իշխել միջնադարյան տիպի
դպրոցը, վորն իր կրթական սխոլաստիկ յե-
ղանակներով, կրոնական գոգմաներով սպա-
նում եր մանկան մեջ ինքնուրույնությունը,
սերը դիպի գիրքը, կյանքի ճանաշողությու-
նը, բնությունը, Աբովյանն առաջինը յեղավ,
վոր առաջ քաշեց Հայաստանի դպրոցները
հիմն ի վեր փոխելու հանդուգն ծրագիրը: Մի
խոսքով՝ նրա գպլրոցական գործունեյությունը
Յերեանում և այլ գործունեյության հետ կապ-
ված ծրագրերը, մտորումները հայ մանկա-
վարժության պատմության լուսավոր եջե-
րից են:

Ի՞նչ եր առաջարկում Աբովյանը.

ա) աշակերտի ձեռը տալ գասադրքեր, պարզ ժողովրդական աշխարհաբար լեզվով և այնպիսի նյութերով, վորոնք կարող լինեն մանկան մեջ արթնացնել բարի և ազնիվ զգացումներ, բարձր մաքեր.

բ) գասատվությունը մեքենայական չպետք է լինի, այլ գիտակցական: Աշակերտը պետք է վնչ թե սերտի, այլ հասկանա, ըմբռնի:

գ) մեծ տեղ տալ բնագիտական գործիքներին, գլոբուսին, քարտեզներին, նկարին, վորպեսպի մանուկն ուսածը զննի, դիտի, շոշափի:

դ) ուսումնական կյանքի անբաժան մասը պետք է կազմեն աշակերտական զբոսանքները, լողը, խաղերը:

ե) զպրոցում ունենալ մի առանձին ուսուցիչ յերկրագործություն և պարտիզպանություն գործնականապես անցնելու համար.

զ) տեղական լեզուների (հայերեն, աղըրմաշաներեն) գործնական նշանակությունից յելնելով՝ նրանց հասկացնել անքան ժամեր, վորքան ուսուց լեզվի համար.

է) վոստիկանության միջոցով պարտականություն գնել հայերի վրա իրենց յերեխաներին դպրոց տալու 7~8 տարեկան հասակից և չհանել նրանց զպրոցից վոչ մի պատճռով, մինչև 14 տարեկան հասակը և, ի հարկե,

ը) ամեն տարի դպրոցի աշակերտներից

մի քանիսին ուղարկել առևտրական, տեխնիկական կամ գյուղատնտեսական դպրոցները, վորպեսպի դրանով ապահովի՛ աշակերտների ապագան և, դրանով իսկ, ժամանակին ամբապնդվի յերկրի արդյունաբերությունը, իսկ լավագույն աշակերտներին, անխթտիր բոլոր գասակարգերից, ուղարկել բարձրագույն դպրոցներ:

Թվարկած կետերը, իհարկե, չեն սպառում Աբովյանի մանկավարժական բարենորոգչական ծրադիրը: Նա իր մանկավարժական հայցքները լրությամբ արծարծել և «Պատմություն Տիգրանի» անագարա վեպի մեջ վորը Ռուսոյի «Եմիլի» յերկվորյակն եւ, ինչպես այդ յերկի, այնպես ել ընդհանրապես նրա մանկավարժական հայացքների վրա իշխում են Ռուսոյի և Պետալոցի համոզումները:

* * *

Աբովյանն իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց կատարելապես դժուված իր շքապատի հետ: Մի անպատմելի խոռվություն համակել եր նրա քննքույշ հոգին: Ներսես Աշտարակցուն ուղղված հոչակավոր թղթի մեջ Աբովյանը գանգատվում ե, վոր իր որերն ապարդյուն են անցնում, կարողությունն

որեց-որ սպառվում է, միտքը զլանում, տես-
չանքները հանգում։ Աբովյանը չի թագցնում,
վոր ամուսնական կյանք մտնելով՝ շատ վա-
ղուց հրաժարվել եր նրանից, վոր ինքը՝ մի
խորթ, ոտար մարդ է սկիբական ընտանի-
քում։

Ի՞նչ վողբերգություն եր ապրում Աքո-
վյանը, Ի՞նչ անբուժելի վերք ուներ նրա սիր-
տը: Դա հայրենիքի վիշտն եր, Հայաստանի
վերքը, վորն ամոքելու համար պատրաստ եր,
ինչպես ինքն և ասում, նույնիսկ խաչ լարձ-
րանալու:

Աբովյանի հոգին լուս մաշվում եր փոթորկութիւնի հոգի մեջ։ Այլևս ուսւապեականությունը չեր ներշնչում այն հույսն ու հավատը, զորունքը նա տարիներ առաջ, յերբ գրիչը ձեռնին, զլուխը թաղած թղթերի մեջ՝ հափշտակված գրում եր իր «Վերք Հայաստանին»։ Այլևս Արովյանը չեր տեսնում հայերի համար քաղաքական ազատու անկախ կյանքի իրական ուղի։ Ավելին, նա պետք է նկատեր, զորուաստան գաճը նոր շղթաներ գրեց հայ ժողովրդի վոտքերին։ Յեկայն անգամ Արովյանի խոյանքի սովոր հոգին ընկզմվեց խոր հուսախառության մեջ, մի մեծ վիճ բանալով իր և իրականության միջև։ Կյանքի ամեն մի քայլն այժմ նրա առաջ խոր հիանթափության մի նոր դուռ եր բացում։ Արովյանը յեկ-

Մի եղ Աբովյանի ձեռագրերից.

բայացի գիտնականների ու ճանապարհորդների հետ (Բողենշտետ, Վագներ, Հակոստհառուզեն, Աբիս և ուրիշներ) ըրջել եր յերկիրը, վկա դառել ժողովրդի աղքատության, նրանց մտավոր անառելի խեղճության, ընդհանուր տղիտության, ուռա պաշտոնյաների չարաշահումների: Նա չեր կարող չնկատել, վոր ուռա կառավարությունը, ինչպես Բողենշտետն եր ասում, «հետամուտ և միայն մի նպատակ՝ կամագուրկ ստրուկներ դարձնել իր հպատակներին»: Նա միթե չեր տեսնում, վոր Յերևանի նահանգապետը կաշուակեր, պաշտոններ առնող ու ծախող մի մարդ ե, վորի անունն անգամ բավական եր ժողովրդին սարսափի մեջ գցելու համար: Միթե նա չեր տեսնում, վոր բարձրագույն իշխանությունը թշնամաբար և տրամադրված դեպի իր անձնավորությունը: Միթե նա այնքան պարզամիտ եր, վոր չհասկանար, թե ինչու իրեն Յերևան տեղափոխեցին, թե ինչու իր ձեռնարկները (առևտրական տեսակետից կարևոր սերմեր ստանալ, զանազան գյուղատնտեսական մեքենաներ գնել, Գերմանիայից բնագիտական գործիքներ ստանալ, ուսուցչական կազմը թարմացնել և այլն) արգելվում, խափանվում եյին: Չե վոր հենց ինքը, Աբովյանը, իր մի գրության մնջ բաց և անում Բալավացկութշնամության բոլոր խաղաթղթերը: Չե վոր

Թիֆլիս, դպրոցական վարչությանն ուղղած մի զեկուցագրի մեջ, նա դառնացած ասում ե, վոր կառավարությունն իր անգործնական հրահանգներով խանգարում ե դպրոցական գործի զարգացմանը, իսկ տեղական իշխանությունները չեն նպաստում դպրոցական գործն: Միթե Աբովյանը կարող եր մոռանալ, վոր Ներսես կաթողիկոսի պատճառով իրեն յերեքորյա կալանքի տակ առան, միթե նա կարող եր չհիշել, վոր կաթողիկոսը հետ կանգնեց իր աշակերտներին Գերմանիա՝ ուսումնառողարկելու տված իր խոստումից:

Այս, իստուահատական եր նրա վիճակը: Հայ Ենակիցները նրան չեցին հասկանում: Եջմիածինը յերես եր դարձրել: Պաշտոնակիցները դավեր եյին սարքում նրա դեմ: Իշխանության աչքում Աբովյանը մի մութ և կասկածելի գորապատական եր:

Աբովյանն ուզում եր հեռանալ Յերևանից, գնալ մի ուրիշ տեղ, Ռուսաստան, Գերմանիա, վոր հանգիստ առնի հետապնդութերից: Բայց խիզճը թույլ չեր տալիս: Նա ուսում, կրթություն եր ստացել, յերդում կերել՝ ապրել ու մեռնել հայրենիքի համար: Թողնել, հեռանալ, նշանակում եր լքել ժողովրդին: Թողնել, հեռանալ, նշանակում եր փախուստի գիմել, զենքերը ծալել, կուրծքը դեմ տալ թշնամությին: Աբովյանի մտքից յերբեք

չեյին հեռանում իր սերելի ընկերոջ, Ստ. Նազարյանի հորդորները—միալ և դիմագրել: Կղան,—առում եր նա, —կղան յերախտագետ հետնորդները և զարմացած հայացքով կնայեն նրա վրա, վորպես հայրենիքի մաքուր սիրո գովելի որինակի:

Բայց վորքան ել համառ լինել Աբովյանը, վորքան ել արիություն ունենար նրա հոգին, միենույն ե, նա զգում եր, վոր ինքը միայնակ ե և անոգ: Նա ապրում եր միայնակ մարդու խոր և սարսափելի վողբերգությունը:

Աբովյանի յեռանդն ու նվիրվածությունը շատերի համար կառկածի աղբյուր եր: Յեզ այդ չեր խոսափել նրա աչքից: Իր մի նամակում նա խոստովանում ե, վոր Սիրիքի ահը շարունակ աչքի առաջ ե: «Կարծում եյի ամեն սհաթ, թե Սիրիքն ե իմ վերջը», —գրում ե Աբովյանը 1847-ին:

Կառկածների մեջ ընկած Աբովյանը կորցնում ե իր հոգու հանդիսաբար: Նա դառնում է մտածկոտ, նյարդային, տառապում ե անքնությունից: Նա, նույնիսկ մի պահ վորոշում ե թողնել աշխարհիկ կյանքը, նորից վերադառնալ եջմիածին, վանքի կամարների տակ ազոթք մըմնջալ: Տանջող հակասությունների մեջ ընկած, նա փախչում ե մարդկանցից, մենակության մեջ հանդիսատինուում, ընկերացաց իր մաքերի ու հույզերի հեղեղին, վո-

րին, ինչպես ինքն ե մի նամակում առում, կարող ե միայն զագաղը խեղղել: Նա հուսահատ վողբում ե իր փայտայած հույսերի կործանումը:

**

1847-ին Աբովյանը Յերեանը թողնելու հաստատ վորոշում ընդունեց: Մտադիր եր տեղափոխվել Թիֆլիս կամ Մոսկվա:

Աբովյանը 1848-ի սկզբներին Թիֆլիս ե մեկնում տեսնվելու Ներսես կաթողիկոսի հետ և առնելու նրա համաձայնությունը Ներսեսյան գպրոցում պաշտոն ստանալու մասին: Ներսեսը խոսք ե տալիս: Աբովյանը վերադառնում է Յերեան: Փետրվարին մի նամակով կաթողիկոսը շտապեցնում է Աբովյանին: Աբովյանն սպասում եր, վոր ինքն ազատաբակի ե իր տեղը մի ուրիշը Յերեանի ուսումնարանի տեսուչ կարգվի: Մարտի 11-ին Աբովյանը գրություն է ստանում, վոր ինքն ազատված ե և տեղը նշանակված է Տուրկեանովը:

Մարտի 30-ին նոր ահօռէն սկսում է ընդունել ուսումնարանի գործերը: Ինչպես մյուս որերը, այսպես ել ապրիլի յերկութին Տուրկեանովը զալիս ե գլորց շարունակելու գործերի ընդունումը, բայց Աբովյանը չկա: Սպասում ե, սակայն զուր: Հետաքրքրվում ե

և իմանում, վոր լուսաբեմին գուրս և զնացել
և այլեւ տուն չի դարձել: Նոր տեսուչը հա-
ջորդ որն արդեն անհանգուտացած Աբովյանի
անհայտացման մասին հայտնում եւ Յերևանի
գավառապետին: Մի պահ բոլորը յենթադրում
են, վոր Աբովյանի անհայտանալու պատճառը
կարող եւ ծառայության հետ կապված վորին
հանգամանք, որինակ, դպրոցական գումարի
վատնում յեղած էինել: Մի գուցե և իրավունք
ունեցին աշխատես կարծելու վորովնետես ապրիլի
յերկուսին, այսինքն, անհայտացման որը,
Աբովյանը պետք եւ Տուրկեատանովին հանձ-
ներ ուսումնարանի դրամական հաշիվները:
Չոպառելով Աբովյանի վերապարձին, ապրիլի
վեցին հատուկ հանձնաժողովը վը բացում և
դրամարկղը և քննում հաշիվները: Ստուգումը
պարզում եւ, վոր հաշիվները ճիշտ են, յեն-
թադրությունը՝ սիսալ:

Սկսվում են վորոնումները: Ամեն մի ան-
նշան հետք վորոնողներին հույս եւ ներշնչ-
չում գտնելու անլուր կորածին: Եմիլիան և
ուրիշ շատերը յերկար ժամանակ կարծում
եյին, վոր Աբովյանը կարող եւ վերապառնալ:
Եմիլիան, ամեն անզամ վոտնաձայն կամ
դռան բաղիսց լսելիս, տեղից վեր եր թոշում,
դառնում աղջկան—«տես հայրդ չե՞»: Մի ա-
ղութ հույս բոլոր տանեցիներին հավատ եր
ներշնչում, վոր այս եւ դռները բացվելու յեն

և նրանց մեջ յերկալու յե Աբովյանը:

Որեցն անցնում եյին, իոկ Աբովյանը չը-
կար:

Ժողովուրդը զանազան առառապելներ եւ հյու-
սում նրա անհայտացման շուրջը: Զանազան
և մեկը մյոււփից տարբեր յենթադրություն-
ների տեղիք եւ տալիս պատահած դեպքը: Վո-
մանք ասում են, վոր իշխանությունը «ու կա-
րետով» տարել եւ Միքիր: Ուրիշներն ել ասում
են, վոր մի յերևանցի թուրք, կասկածելով,
վոր Աբովյանը սիրային կապերի մեջ եւ իր
կնոջ հետ, գաղանարար սպանել եւ թաղել
իր բակում: Մի քանիսն ել այն կարծիքին
եյին, թե սպանողը հետքը կորցնելու համար
դիակը գետն և նետել: Սկզբում միայն Բո-
գենշտեռը, հետո, արդեն տարիներ անց, նաև
Ստ. Նաղարյանն այն յենթադրությունն ա-
րին, վոր «Աբովյանը մի խավար բոպեյի մեջ
մահու յե տվել յուր անձը», այսինքն՝ անձ-
նասպան եւ յեղել:

Սրանք բոլորն ել յենթադրություններ են:
Մինչեւ հմայ յել Աբովյանի անհայտացումը
միում եւ մի չլուծված առեղծված: Թերեւս այդ-
պիս ել մնա, մինչեւ վոր մի անակնկալ վկայու-
թյուն չկա ցըելու գաղտնիքը, խորհըրդավո-
րությունն ու մութը: Բայց ինչպես ել լուծ-
վի հարցը, վարկածներից վոր մեկն ել հաս-
տատվի և ճշովի, միևնույն և այժմյանից մի

բան պարզ եւ Այդ այն եւ, վոր Աբովյանն իր ժամանակի զոհը յեղավ։ Խանդի հողի վրա յե սպանվել, թէ ինքն եւ ձեռք բարձրացրել իր վրա, Սիրիք են քշել, նրան, թէ ինքն եւ փախել ու կորստի մատնել իրեն, միւնուցն եւ, պարզե, վոր բոլոր դեպքերում ել ժամանակը, խավար ժամանակն սպանեց նրան։

Նա չկարողացավ գուրս պրծնել «մշուշից, կամայականության, լուելյան անզգայացման, անհետ կորստի, տառապնալից ատնջանքների թագավորությունից»։

Այս, նա ընկավ անհավասար կովի մեջ, նոր զրականության ճակատագրի համար մղած հանդուգն պատերազմի պահին՝ իրեւ դաֆան ժամանակների նահատակ։



Ամփոփենք։

Աբովյանի կյանքի տիսուր տարեգրությունը հայ ժողովրդի զարավոր տառապանքի խտացումն եւ մի անհատի մեջ, մի հանճարեղ մարդու, վոր ընկավ՝ խավար ժամանակների նենգ գաշույնը «ազնիվ ու մեծ սրտի մեջ»։

Հիրավի, վորքան ընդհանուր ու նման բան կա հայ ժողովրդի և նրա զավակի ճակատագրերի մեջ։

Հայ ժողովուրդը մի խորին խորհուրդ հոգում, վերքոտ սրտի թառանչը շուրթերին, անվախճան մաքառում եւ ապրել՝ վկայելու դարերի ու ժամանակների, լուսավոր մարդկության առաջ, վոր ինքն ել մյուս ժողովուրդների պես խոռք ունի առելու աշխարհին, վոր «հայի հանճարն ել ինչպես բանատեղծն եւ ասում, միշտ սպառնել եւ վսկմ, են սուրբ ու նուրբ վոլորտներում, թեև ինքը՝ հայը միշտ լողացել եւ արյան ծովի մեջ»։

Աբովյանի կյանքն ել մի մաքառում յեղավ, մաքառում խավարի ու տգիտության գեմ։ Նա պատուց իր կուրծքը ու սիրտը ջան գարձած ժողովրդին առաջնորդեց դեպի ազատն

ու գեղեցիկը, լուսավորն ու բարձրը: Ինքը
վիրավոր և ուժառապառ, դժվար ճանքի կեսին,
ընկավ արյունաքամ, բայց նրա մխացող սիր-
տը յերկար լուսավորեց նրանց ուղին, ովքեր
գնացին նվաճելու փառքն այն ծով գանձե-
րի, ինչ վոր դարերով յերկնել եր հայ ժողո-
վըրդի միտքն ու հոգին:

Մի քանի տարուց կմոտենա մեծ լուսա-
վորչի անհայտացման հարյուրամյակը և մենք
չգիտենք, թե վորտեղ են հանգչում նրա վոս-
կորները: Մենք նույնիսկ չգիտենք, թե վոր-
տեղ և ինչպես Աբովյանն ավանդեց իր վեր-
ջին շունչը, ունեցմի արդյոք իր հողաթումքն
աշխարհում: Բայց նա այն հազվագյուտ վո-
գիներից ե, վորոնք փարատելով դարերի մշու-
ցը՝ հավերժությանն հն ձգտում:

Ազատագրված հայ ժողովուրդը մի նոր
կյանքի յե վոգեկոչում նրան, վոր այն անի-
տավ ու խավար դարում փորձեց իր սեփական
արյունով սրբել ժողովրդի աչքից տառապան-
քի դարավոր արցունքը: Այս, մի նոր կյան-
քի յենք կոչում նրան, վոր մի վառ հիշատակ
և թողել ժողովրդի սրտում:

Տեխ. Խմբագիր՝ Ս ա. Ա լ թ ու ն յ ա ն
Մըբագրիչ՝ Ա. Ա ր դ ա ք ա ն յ ա ն
Գլավլիսի լիազոր՝ Զ - 1033. Հրատ.
№ 4923 Պատվեր 867. ակրաժ 2000.
Թուղթ 62×94. Տպագր. 5 մամ. Մեկ
մամ. 23, 300 նշան. Հանձնված և
արտադրության 29 հուլ. 1939 թ.
■ Ստորագրված ե տպագրության հա-
մար 25 դեկտ. 1939 թ. Պետհրատի 1
տպարան, Յերևան, Լենինի 65

7

ՀՀ Ազգային գրադարան



NL0381269

68.924